Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության
համալսարանի
ռեկտոր
Գխ Նախագահ

Ն. Խ. Սարիբեկյան

«11» 11 2022թ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2022

№	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	էջ
1.	Նախաբան. թվեր՝ 2021-2022 ուստարի	3
2.	Վարչական կազմ, ամբիոնի վարիչներ	5
3.	Ընդունելություն	6
4.	Գիտական խորհրդի կազմը	7
5.	Գիտական խորհրդի գործունեությունը	8
6.	Ռեկտորատի գործունեությունը	8
7.	ԱԲՀ-ի Գիտական խորհրդին կից գործող Որակի ապահովման հանձնաժողով	9
8.	Որակի ապահովում	10
9.	Գիտական մաս	16
10.	Ֆակուլտետների և ուսումնական մասի գործունեություն	19
11.	Մարդկային ռեսուրսների կառավարման և ընդհանուր բաժին	30
12.	Արտաքին կապերի բաժին	33
13.	Գիտաբժշկական ուումնական կենտրոն	41
14.	Գրադարան	42
15.	ԱԲՀ կայքէջ	43
16.	Ուսանողական խորհրդի գործունեություն	44
17.	Ուսանողական գիտական ընկերություն	45
18.	Տնտեսական մաս	46

1.ՆԱԽԱԲԱՆ

Ավանդական բժշկության համալսարանը (այսուհետ՝ ԱԲՀ կամ Համալսարան), հաշվետու ժամանակահատվածում առաջնորդվելով ՀՀ Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության դրույթներով, համալսարանի կանոնադրությամբ, 2020-2025թթ. գործող ռազմավարական զարգացման ծրագրով, կառավարման և գիտական խորհուրդների, ռեկտորատի որոշումներով, իրականացրել է կրթության որակի ապահովմանն ուղղված տարաբնույթ գործընթացներ:

Ուսումնական աշխատանքների կազմակերպման և իրականացման գործընթացներում ԱԲՀ-ն առանձնահատուկ կարևորել է բարձրագույն կրթության ոլորտի նորագույն մարտահրավերները և դրանց արձագանքելու, շահառուների կարիքները լավագույնս բավարարելու, կրթության որակը և արդյունավետությունը էապես բարձրացնելու անհրաժեշտությունը:

2021-2022 ուստարվա ընթացքում ԱԲՀ-ն հետևողականորեն շարունակել է իր գործունեությունը մրցունակ մասնագետների պատրաստման, ՄԿԾ-երի բարելավման, համալսարանի միջազգայնացման, կառավարման գործընթացների կանոնակարգման, ֆինանսական կայունության ապահովման և այլ ուղղություններով: Համալսարանի որդեգրած ուսանողակենտրոն սկզբունքը շարունակվել է գերակա լինել հատկապես ուսանողների հետ տարվող աշխատանքներում:

Զգալի աշխատանքներ են տարվել ԱԲՀ 2 նոր մասնաշենքերի կառուցման ուղղությամբ. աշխատանքները կավարտվեն մինչև 2023 թվականի ավարտը:

Ստորև նկարագրված են ԱԲՀ-ի կողմից 2021-2022 ուստարում իրականացված աշխատանքները՝ ըստ գործունեության տարբեր ոլորտների:

ԹՎԵՐ՝ 2021-2022 ՈՒՍՏԱՐԻ

ԱԲՀ՝ 32, հիմնադրվել է 1991թ.

Անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագիր՝ 2

Բուժական ֆակուլտետ՝ 435 ուսանող

Ստոմատոլոգիական ֆակուլտետ՝ 95 ուսանող

Ուսանողներ՝ 530

Օտարերկրյա ուսանողներ՝ 494

Շրջանավարտներ՝ 78

Համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր՝ 19

2. ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

№	Անուն, Ազգանուն	Պաշտոն
1.	Սարիբեկյան Նորիկ	Ռեկտոր /կ.գ.թ.
2.	Գյոզալյան Արայիկ	ՈԱ և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտոր
3.	Կարապետյան Անահիտ	Դեկան
4.	Գրիգորյան Վահան	Գիտական մասի վարիչ/բ.գ.թ.
5.	Սարգսյան Ասյա	Ուսումնական մասի վարիչ
6.	Հովսեփյան Մանուշակ	ՈԱ բաժնի առաջատար մասնագետ
7.	Սարգսյան Անի	Արտաքին կապերի բաժնի վարիչ
8.	Թարջումանյան Նվարդ	ՄՌԿ և ընդհանուր բաժ. վարիչ
9.	Ավոյան Սուսաննա	Գլխավոր հաշվապահ
10.	Խեչումյան Սիմոն	Քաղ. պաշտպ. շտաբի պետ
11.	Մանաշյան Գոհար	Դեկանի օգնական
12.	Կիրակոսյան Գոհար	Ուսումնական մասի վարիչի օգնական
13.	Դանիելյան Նաիրա	Ուսումնական մասի վարիչի օգնական
14.	Գաբրիելյան Վարդ	ՄՌԿ և ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ
15.	Հարությունյան Լուսինե	Գանձապահ-հաշվապահ
16.	Ավետյան Աննա	Գրադարանավար
17.	Վարդանյան Լիաննա	Արտաքին կապերի բաժնի մասնագետ
18.	Հեղինե Գյուլնազարյան	Արտաքին կապերի բաժնի մասնագետ

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉՆԵՐ

№	Ամբիոն	Ազգանուն, անուն	Գիտական աստիճան, կոչում
1	Հումանիտար առարկաների	Կարապետյան Տաթևիկ	բանաս. գ.թ.
2	Բնագիտական առարկաների	Ջավրուշյան Հայարփի	կ.գ.թ.
3	Բժշկակենսաբանական առարկաների	Հունանյան Նաիրա	կ.գ.թ.
4	Սոցիալական բժշկության	Օվչյան Աննա	հ.գ.թ.
5	Թերապևտիկ առարկաների	Նազլուխանյան Մարո	բ.գ.թ.
6	1.Վիրաբուժական առարկաների	Ավագյան Էդիկ	բ.գ.թ.
7	2.Վիրաբուժական առարկաների	Մանվելյան Ռաֆաել	բ.գ.թ.
8	Ստոմատոլոգիայի	Հակոբյան Հովնան	բ.գ.թ.

3. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Ավանդական բժշկության համալսարանն իրականացնում է անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրեր՝ «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտություններով.

Դասիչ	Ուսուցման ձևը	Ուսուցման տևողությունը	Ուսուցման լեզուն	Որակավորում	Սահմանային տեղեր
Բուժական գործ 091101.00.7	Առկա	6	Հայերեն և անգլերեն	բժիշկ	120
Ստոմատոլոգիա 091201.00.7	Առկա	5	Հայերեն և անգլերեն	բժիշկ-ստոմատոլոգ	120

Համալսարանում ուսուցումն իրականացվում է 2 ֆակուլտետներում՝ «Բուժական» և «Ստոմատոլոգիական», միայն առկա համակարգով: 2021 թվականի ընդունելությունն իրականացվել է համաձայն լիցենզիայով սահմանված տեղերի, մասնավորապես.

- «Բուժական գործ» մասնագիտությամբ՝ 83 ուսանող
- «Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ՝ 14 ուսանող:

Ըստ տարիների համեմատական պատկերը.



Համեմատած նախորդ տարիների ընդունելության տվյալների, հաշվետու տարում «Բուժական գործ» մասնագիտության դիմորդների թիվն ավելացել է, իսկ «Ստոմատոլոգիա» մասնագիտության դիմորդների թիվը երեքով պակասել է: Ամփոփելով ընդունելության արդյունքները՝ կարող ենք փաստել, որ համեմատած 2020-2021 ուստարվա հետ՝ 2021-2022 ուստարում առաջին կուրս ընդունվող ուսանողների թիվն աճել է **15%**-ով: 2021-2022 ուստարում Համալսարանում ՀՀ քաղաքացիների ընդունելություն ևս չի կազմակերպվել՝ դիմորդների ոչ բավարար թվով պայմանավորված:

4. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

Նախագահ	Կ.գ.թ., ռեկտոր Սարիբեկյան Ն.Խ.
Գիտական քարտուղար	Գիտական մասի վարիչ, Գրիգորյան Վ.Ս.
Անդամներ	
Գյոզալյան Ա.Գ.	Մ.գ.թ., դոցենտ, ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտոր
Թարջումանյան Ն.Վ.	ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ
Կարապետյան Ա.Ն.	Դեկան
Սարգսյան Ա.Հ.	Ուսումնական մասի վարիչ
Սարգսյան Ա.Ա.	Արտաքին կապերի բաժնի վարիչ
Մինասյան Ա. Լ.	Բ.գ.դ., պրոֆեսոր, ուս. աշխատանքների գծով պրոռեկտոր
Կարապետյան Տ.Ս.	Բան.գիտ.թ., «Հումանիտար առարկաների» ամբիոնի վարիչ
Ջավրուշյան Հ.Գ.	Կ.գ.թ., «Բնագիտական առարկաների» ամբիոնի վարիչ
Հունանյան Ն.Գ.	Կ.գ.թ., «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնի վարիչ
Նազլուխանյան Մ.Ա.	Բ.գ.թ. «Թերապևտիկ առարկաների» ամբիոնի վարիչ
Ավագյան Է.Ս.	Բ.գ.թ. «Վիրաբուժական առարկաների N 1» ամբիոնի վարիչ
Մանվելյան Ռ.Լ.	Բ.գ.դ.պրոֆեսոր «Վիրաբուժական առարկաների N 2» ամբիոնի վարիչ
Մինասյան Է. Մ.	Բ.գ.թ., «Է.Մինասյանի անվան ավանդական բժշկության» ամբիոնի վարիչ
Օվչյան Ա.Ա.	Հոգ.գ.թ., «Սոցիալական բժշկության» ամբիոնի վարիչ
Հակոբյան Հ.Հ	Բ.գ.թ., «Ստոմատոլոգիայի» ամբիոնի վարիչ
Վարդանյան Վ. Յ.	ԳԲՈՒԿ-ի գլխավոր բժիշկ
Ավոյան Ս.Հ.	Գլխավոր հաշվապահ
Բաբասյան Ա.	ՈՒԽ նախագահ, ստոմ. Ֆակ. 4-րդ կուրսի ուսանող
Ալ-Բայաթի Զ.	ՈՒԳԸ նախագահ, բուժ. ֆակ. 4-րդ կուրսի ուսանող
Զադբուկե Ռ.Պ.	Բուժ. ֆակ. 3-րդ կուրս
Դանիել Շ.Ա.	Բուժ. ֆակ. 3-րդ կուրս
Վարդանյան Կ.Ե.	Հոգ.գ.դ., պրոֆեսոր, արտաքին շահակից

5. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Համալսարանի գիտական խորհուրդը համալսարանի ուսումնամեթոդական, գիտա-հետազոտական գործունեությունը պլանավորող, համակարգող կոլեգիալ մարմին է, որը 2021-2022 ուստարվա ընթացքում գումարել է 14 նիստ: Գիտական խորհրդի նիստերի նախապատրաստումը, արձանագրությունների վարումը, շահագիգիռ կողմերին որոշումներին ծանոթացնելն իրականացնում է Գիտական մասի վարիչը, որը միևնույն ժամանակ Գիտական խորհրդի քարտուղարն է:

Համառոտ ներկայացնենք Գիտական խորհրդի գործունեությունը՝

- Հաստատվել են Կառավարման խորհրդի, Գիտական խորհրդի, ռեկտորատի, ինչպես նաև հաձնաժողովների կազմերը:
- Լսվել և քննարկվել է համալսարանի ինստիտուցիոնալ հավատագրման փորձագիտական խմբի կողմից ներկայացված թերությունների վերացման պլան ժամանակացույցով կատարված աշխատանքների կատարողականը:
- Քննարկվել և հաստատվել են կազմակերպչական, ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման վերաբերյալ անհրաժեշտ իրավանորմատիվային փաստաթղթերի փաթեթները:
- Հաստատվել են 2021-2022 ուստարվա գործող կրթական ծրագրերի ուսումնական պլանները:
- Քննարկվել են ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքները:
- Լսվել են ամբիոնների վարիչների, ստորաբաժանումների և հանձնաժողովների ղեկավարների հաշվետվությունները:
- Հաստատվել է համալսարանի 2021-2022 ուսումնական տարվա անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերի մասնագիտությունների ընդունելության քննությունների արդյունքները:
- Գիտական խորհրդի նիստերում քննարկված հարցերի շուրջ կայացվել են համապատասխան որոշումներ:

6. ՌԵԿՏՈՐԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Համալսարանի ռեկտորատը ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, որը գործում է իր կանոնակարգի համաձայն: Համալսարանի Կառավարման խորհրդի և գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում ռեկտորատը քննարկում, երաշխավորում և իր լիազորությունների սահմաններում որոշումներ է կայացնում Համալսարանում ուսումնական գործընթացներին առնչվող հարցերի վերաբերյալ:

Համալսարանի ռեկտորատը 2021-2022 ուստարվա ընթացքում գումարել է 27 նիստ:

1. Քննարկվել և հաստատվել է ռեկտորատի 2021-2022 ուստարվա աշխատանքային պլանը:
2. Լսվել է 2021-2022 ուստարվա ուսումնական գործընթացի պլանավորման և կազմակերպման աշխատանքների մասին:

3. Հրավիրված նիստերին քննարկվել են ուսանողների հեռացման, ազատման և վերականգման հարցերը:
4. Լսվել և հաստատվել է նախորդ ուստարվա ամառային քննաշրջանի լուծարքների կազմակերպման և անցկացման մասին հարցեր:
5. Քննարկվել են 2020-2021 ուստարվա ամառային քաննաշրջանի արդյունքները:
6. Լսվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 25.10.2021թ-ի N01/11.2/24434-2021 գրությունը՝ ԱԲՀ-ում ուսուցումը հեռավար կազմակերպելու մասին:
7. Լսվել են ուսանողերին կուրսից կուրս տեղափոխելու վերաբերյալ հարցեր և այլն:

7. ԱԲՀ-ի Գիտական խորհրդին կից գործող Որակի ապահովման հանձնաժողով

ԱԲՀ-ի գիտական խորհրդին կից գործող Որակի ապահովման հանձնաժողովը (ՈԱՀ) պատասխանատու է որակի ապահովման քաղաքականությանն ուղղված առաջարկների ուսումնասիրության, կանոնակարգային, ընթացակարգային փաստաթղթերի և կրթական ծրագրերի վերանայման և ներդրման քննարկման ու գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնելու համար:

ՈԱՀ-ն համալսարանում որակի ապահովման գործընթացները կարգավորող մարմին է, որի հիմնական նպատակը որակի մշակույթի ձևավորումն ու զարգացումն է, որակի ապահովման ոլորտում ՌԾ-ից բխող խնդիրների լուծման կազմակերպումը: Այս առումով հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են ներքին շահակիցների հետ ՈԱՀ ընդլայնված նիստեր և քննարկվել ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման պլան-ժամանակացույցի համաձայն կատարված աշխատանքները: Յուրաքանչյուր չափանիշի համար նշանակվել է պատասխանատու և համակարգել անհրաժեշտ աշխատանքները: ԱԲՀ-ի ՌԾ-ով նախատեսված և թերությունների շտկման շուրջ տարվող աշխատանքների ընթացքում ծագած խնդիրները բարձրաձայնվել են հանդիպումների ընթացքում՝ ժամանակին խոչընդոտները հարթելու համար:

Ինստիտուցիոնալ հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո (04.29.2021) երկամսյա ժամկետում ՈԱԱԿ է ներկայացվել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիրը և համապատասխան ժամանակացույցը՝ հաշվի առնելով «Կառավարում և վարչարարություն», «ՄԿԾ-ներ, «Հետազոտություն և զարգացում», «Որակի ներքին ապահովման համակարգ» ոլորտներում առկա խնդիրներին լուծում տալու անհրաժեշտությունը:

Համալսարանում փոխվել է ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունների կազմման ձևաչափը, աստիճանաբար փոխվում է նաև հաշվետվությունների կազմման մոտեցումը: ՈԱՀ անդամ և Որակի ապահովման և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորը 2021-2022 ուստարում վերլուծել է 8 ամբիոնների տարեկան կատարողականները, համապատասխան հետևությունների հիման վրա առաջարկել բարելավման որոշ քայլեր:

2020-2021 ուստարում ՈԱՀ-ի կողմից վերանայվել, քննարկվել են մի շարք իրավանորմատիվային փաստաթղթեր, այդ թվում՝ «Գրադարանի կանոնադրությունը», որը

ԱԲՀ-ում հաստատվել է 2011 թվականին, սակայն այն փոփոխությունների կարիք ուներ. ներառված չէին արդի գրադարանին բնորոշ դրույթներ և այլ կարևոր կետեր: ՈԱՀ հանձնաժողովի հանձնարարությամբ մեր գրադարանավարը ուսումնասիրել էր այլ բուհերի գրադարանների կանոնակարգերը և ներկայացրել իր առաջարկությունները կանոնակարգում փոփոխություններ անելու վերաբերյալ:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում որպես թույլ կողմ էր արձանագրվել շահակիցներից հետադարձ կապի ապահովման մեխանիզմների ոչ լիարժեք կիրառումը, և նրանց թույլ ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում: Այս առումով վերանայվել է ԱԲՀ-ում 2017թ.-ից գործող «Ներքին և արտաքին շահակիցների հետադարձ կապի քաղաքականությունը», որը հիմնականում վերաբերում էր շահակիցներից ստացվող հետադարձ կապի մեխանիզմներին ու գործիքներին, հարցումների անցկացման մեթոդաբանությանը:

Հաշվի առնելով նաև այն, որ Համալսարանի շահակիցների հետ կապի ապահովման համար անհրաժեշտ է նրանց տրամադրել համալսարանի գործունեության, ձեռքբերումների և գործընթացների որակի վերաբերյալ օբյեկտիվ և հավաստի որակական և քանակական տեղեկատվություն, ուսումնասիրել հետադարձ կապի միջոցով շահակիցներից ստացված արձագանքը և դրա հիման վրա բարելավել գիտակրթական գործունեությունը, նշված քաղաքականությունը ներառել է Համալսարանում շահակիցների տեղեկատվությամբ ապահովման մեխանիզմներն ու մեթոդները, նրանց հետ կապի հաստատման մեխանիզմներն ու գործիքները:

ՈԱՀ-ն կազմակերպել և համակարգել է ԱԲՀ-ի ՌԶԾ-ի գնահատումն՝ ըստ ԳԱՑ-երի:

8. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Որակի ներքին ապահովման գործընթացներն ԱԲՀ-ում իրականացվել են 2020-2025 թթ. Ռազմավարական զարգացման ծրագրի 7 չափանիշների և ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակում վերհանված թերությունների շտկման պլանի համաձայն: Աշխատանքները կազմակերպվել, համակարգվել, գնահատվել են Որակի ապահովման և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորի կողմից:

Հաշվետու ուստարում ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորը, ՈԱ առաջատար մասնագետը սերտ համագործակցել են ԱԲՀ կառուցվածքային ստորաբաժանումների հետ, իրականացնել որակի շարունակական բարելավմանն ուղղված փաստաթղթերի համալրում և վերանայում, տրամադրել խորհրդատվական բազմաբնույթ ծառայություններ, կատարել հարցումներ և վերլուծություններ, ներկայացրել առաջարկություններ՝ նպաստելով համալսարանի գործունեության բոլոր ոլորտներում որակի մշակույթի զարգացմանը:

Կառավարում և վարչարարություն: Կարևորելով ՊԻԳԲ շրջափուլի ապահովումը ԱԲՀ-ում՝ հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են կրթության որակի բարելավման աշխատանքները: Հաշվետու տարում պլանավորվել և իրականացվել է արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ ներքին իրավական ակտերի, ընթացակարգերի և կանոնակարգերի մշակում/վերանայում և հաստատում:

Մշակվել են՝

- Պրակտիկայի ղեկավարի/կլինիկական աշխատանքների գծով պատասխանատուի հաշվետվության ձևաչափը /ԳԽ 11.10.2021թ. N 2 նիստի որոշում/
- Ամբիոնի 3 տարվա գործունեության մշտադիտարկման ընթացակարգը /ԳԽ 27.12.2021թ. N 4 նիստի որոշում/

Վերանայվել են՝

- ԱԲՀ-ում սովորողների ակադեմիական շարժունության կարգը / ԳԽ 28.08.2022թ. N 1 նիստի որոշմամբ /
- ՈՒԳԸ կանոնադրությունը / ԳԽ 28.04.2022թ. N 10 նիստի որոշում /
- ՈՒԽ կանոնադրությունը / ԳԽ 28.04.2022թ. N 10 նիստի որոշում /

2020-2021 ուսումնական տարում համալսարանի կառավարման համակարգում արված բարեփոխումներն ի հայտ են բերում այն իրողությանը, որ համալսարանը վարչարարության իրականացման պլանավորման և իրականացման փուլերից բացի իրականացրել է նաև գնահատում և բարելավում: Ձեռնարկվել են քայլեր ԱԲՀ-ի գործունեության վրա ազդող ներքին և արտաքին գործոնների բացահայտման և բարելավման ուղղությամբ:

- Գործող կանոնակարգերի համաձայն ուսանողների շրջանում կազմակերպվել են առցանց հարցումներ, գնահատվել է շրջանավարտների ստացած կրթությունից, համալսարանի կողմից տրամադրվող ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից, պրակտիկայից նրանց բավարարվածությունը:
- 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակում ԱԲՀ-ի ղեկավարությունը գործող կարգերին համապատասխան կազմակերպել է Ս. Թերեզա բժշկական համալսարանից (ԿԳՄՄՆ-ի կողմից համալսարանին լիզենզիայից զրկելու հետևանքով գործունեությունը դադարեցվել էր) ազատված մի խումբ հայ և օտարերկրյա ուսանողների ընդունելությունը/տեղափոխությունը: Արդյունքում ԱԲՀ-ում սովորող ուսանողների թիվն աճել է մոտ 18%-ով: Հատկապես ուրախալի է այն, որ ՀՀ քաղաքացիները համալրել են Ստոմատոլոգիական ֆակուլտետի ուսանողների թիվը (4-րդ կուրս):

  Այսինքն, համալսարանը խելամիտ ժամկետներում արտաքին գործոններով պայմանավորված խնդիրը կարգավորել է՝ օգտագործելով իր ներքին ռեսուրսները՝ հօգուտ և՛ ԱԲՀ դիմած ուսանողների, և՛ համալսարանի:
- ԱԲՀ ԳԽ որոշման համաձայն իրականացվել է ԱԲՀ-ի 2020-2025թթ. ռազմավարական զարգացման ծրագրի կատարողականի գնահատում՝ ըստ ԳԱՑ-երի:
- ԳԽ նիստի մեկ այլ որոշման համաձայն մատուցված կրթական ծառայությունների որակի՝ միջազգային աշխատաշուկայում ճանաչման նպատակով կնքվել է համագործակցության պայմանագիր «Next Learning Center» (NLC) կենտրոնի հետ, որի շրջանակում հնդիկ ուսանողների համար նախատեսված Հնդկաստանի Հանրապետության արտասահմանյան բժշկական շրջանավարտների համար պարտադիր քննության (Foreign Medical Graduates Examination) նախապատրաստական դասընթացների իրականացման նպատակով NLC կենտրոնը Ավանդական բժշկության համալսարանի «Բուժական գործ»

մասնագիտության 4-6-րդ կուրսերի ուսանողների համար կազմակերպելու և անցկացնելու է վերապատրաստման դասընթացներ:

- ԱԲՀ ռեկտորի՝ 27.12.2021 թ.-ի հրամանի համաձայն ձևավորված հանձնաժողովը 20.01.2021-27.02.2021 ժամանակահատվածում իրականացրել է համալսարանի 6 ամբիոնների 2019-2022թթ. գործունեության մշտադիտարկում ԱԲՀ գիտխորհրդի կողմից հաստատված «Ամբիոնի 3 տարվա գործունեության մշտադիտարկման ընթացակարգ»-ի հիման վրա: Ուսումնասիրվել են ամբիոնների փաստաթղթերը և կատարած աշխատանքները: Հանձնաժողովի կողմից կատարվել է հավաքագրված տեղեկատվության վերլուծություն, արվել են համապատասխան հետևություններ, բարելավման առաջարկներ, որոնք քննարկվել են ԱԲՀ ԳԽ նիստում:
- Հաշվետու ժամանակահատվածում 2020-2021 ուստարվա ամբիոնների կատարողական զեկույցները (հաշվետվությունները) վերլուծվել են ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի կողմից, քննարկվել ԳԽ-ում և ներկայացվել հստակ հանձնարարականներ ամբիոնների գործունեության բարելավման նպատակով:

2. Կրթական գործունեություն:

- հաշվետու ժամանակահատվածում ՈԱ և ԿԲ աշխատանքների գծով պրոռեկտորի առաջարկությամբ և ՄՌԿ և ընդհանուր բաժնի օժանդակությամբ 2021-2022 ուստարվա ավարտին կազմակերպվել են անգլերենի վերապատրաստման դասընթացներ: ԱԲՀ-ի դասախոսները, վարչական աշխատակիցները մասնակցել են «Բաբելոն» ուսումնական կենտրոնի մասնագետների կողմից անցկացված անգլերենի իմացության բարելավման դասընթացներին:
- Գործող ՄԿԾ-ների մշտադիտարկման նպատակով հավաքագրվել է անհրաժեշտ տեղեկատվություն, այդ թվում շրջանավարտների շրջանում ստացած կրթությունից, կրթական ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ անցկացված հարցումների արդյունքները, ամփոփիչ ատեստավորման հաշվետվություններում ներկայացված բարելավման առաջարկությունները, դասալսումների քննարկումները և այլն:
- Հաշվետու ժամանակահատվածում դասալսումները և քննարկումներն իրականացվել են գործող կարգի հիման վրա: Ամբիոնների կողմից ներկայացված դասալսումների արդյունքները ներկայացվել են ԱԲՀ-ի գիտական խորհրդի քննարկմանը 2021-2022 ուստարվա ավարտին: Այս գործընթացը պահանջում է պարբերականություն, իսկ արդյունքների վերլուծությունը հնարավորություն կընձեռի համալսարանի ղեկավարությանը ճիշտ պլանավորել գալիք տարվա ուսումնական գործընթացը:
- Համագործակցության աշխատանքներ են ընթանում տեղական և արտասահմանյան բժշկական բուհերի և կազմակերպությունների հետ: ԱԲՀ-ի և Բելառուսի Գրոդնոյի պետական բժշկական համալսարանի միջև կնքված համագործակցության համաձայնագրի շրջանակում կազմակերպվել են փոխադարձ դասախոսություններ:

3. Ենթակառուցվածքներ և ֆինանսական ռեսուրսներ:

- Թվային գրադարանների ասոցիացիաների հետ կնքված պայմանագրի համաձայն գրադարանային ֆոնդը շարունակում է բարելավվել արտասահմանյան մասնագիտական

և ոչ մասնագիտական գրականությամբ: ՈԱ առաջատար մասնագետի և ուսումնական մասի կողմից 2021-2022 ուստարում անցկացվել են կրթական ռեսուրսներից ուսանողների բավարարվածության առցանց հարցումներ, որտեղ ներառվել են գրադարանի սպասարկումից, մասնագիտական գրականության առկայությունից և հասանելիությունից ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցեր: Հարցման արդյունքները վերլուծվել են, քննարկվել ԳԽ նիստում, բարելավման առաջարկները ներկայացվել են շահագրգիռ ստորաբաժանումներին:

- ԱԲՀ փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության կառավարման միասնական էլեկտրոնային համակարգի ներդրման աշխատանքներն ընթացքի մեջ են:
- Պարբերաբար իրականացվում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների որակի գնահատման մեխանիզմների բարելավման աշխատանքներ: Ընթացիկ ուստարում տնտեսական մասի վարիչի կողմից կատարվել է առկա ռեսուրս-ների հաշվառում:

4. Ուսանողակենտրոն քաղաքականություն:

Համալսարանի կառավարման գործընթացում ուսանողներն ունեն իրենց կայուն տեղն ու դիրքը: 2021-2022 ուստարում ԱԲՀ-ի ղեկավարությունը, հաշվի առնելով օտարերկրյա ուսանողների խնդրանք-դիմումը, որը մասնավորապես վերաբերում էր Համալսարանում գործող «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների ուսումնական պլան-ներում ընդգրկված Ավանդական բժշկության կրթաբլոկի դասընթացներին հատկացված ժամաքանակին, կրեդիտներին, որոնք հաշվի չեն առնվում իրենց երկրներում, հանձնարարեց համալսարանի ՄԿԾ-ների մշտադիտարկման և վերանայման աշխատանքային խմբին վերանայել երկու ֆակուլտետների բարձր կուրսերի (3-6-րդ կուրս) ուսումնական պլանները:

ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորը, ՈԱ առաջատար մասնագետը այս հարցի շուրջ մասնակցել են քննարկումներին, ԳԽ նիստերին:

2021-2022 ուստարում ՈԱՀ-ի և շահագրգիռ աշխատակիցների կողմից վերանայված Գրադարանի կանոնադրությունը, ՈւԽ կանոնադրությունը, ՈՒԳԸ կանոնադրությունները ներկայացվել են ուսանողներին և տեղադրվել ԱԲՀ պաշտոնական կայքում:

5. Արտաքին կապեր և միջազգայնացում:

Աստիճանաբար ակտիվանում է գիտակրթական կազմակերպությունների հետ ինստի-տուցիոնալ համագործակցությունը: 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակում ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի անմիջական նախաձեռնությամբ, ԱԲՀ Գիտական մասի վերահսկման և աջակ-ցության ներքո Բելառուսի Հանրապետության Գրոդնո քաղաքում կայացավ գիտապրակտիկ միջազգային գիտաժողով՝ «Թթվածին և ազատ ռադիկալներ» խորագրով, որին մասնակցեց նաև ԱԲՀ «Բուժական ֆակուլտետի» 5-րդ կուրսի ուսանող, ԱԲՀ ՈւԳԸ նախագահ Զիյադ Ջ. Թարիքը և հանդես եկավ գիտական զեկույցով՝ ներկայացնելով “The Possible Role of Inflammation and Oxidative Stress in Development of Premenstrual Syndrome Symptoms: a Review” /«Բորբոքման և օքսիդատիվ սթրեսի հավանական դերը նախադաշտանային համախտանիշի զարգացման մեջ. վերլուծական աշխատություն» վերնագրով հոդվածը:

ԱԲՀ «Բուժական գործ» մասնագիտության 6-րդ կուրսի ուսանողուհի Աֆրոդին Քամիլը մասնակցել է Բուլղարիայի Հանրապետության Սոֆիայի բժշկական համալսարանում կայացած «Ուսանողների և երիտասարդ բժիշկների բժշկական գիտությունների» XX միջազգային կոնգրեսին: ԱԲՀ ուսանողուհու հետազոտական նախագիծը վերաբերում էր անգիոլոգիայի ոլորտին, որն իրականացվել է ԱԲՀ պրոֆեսորադասախոսական կազմի ղեկավարությամբ (բ.գ.դ. Ռ.Մանվելյան, Ա.Մինասյան և դոկտոր Հ.Ստեփանյան):

ԱԲՀ ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորը, Գիտական մասի վարիչը մշտապես հետաքրքրվում են դրամաշնորհային ծրագրերով՝ համալսարանի ռազմավարությանը համապատասխան, կարծում ենք, անկախ կազմակերպաիրավական ձևից, մեր համալսարանը ևս դրամաշնորհային ծրագրում ընդգրկվելու հնարավորություն կունենա:

6. Արդիական հետազոտություններ և նորարարություն

Հաշվետու տարում ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորն ակտիվ քայլեր է արել միջազգային գործընկեր հաստատությունների հետ համալսարանի ձեռքբերած կապերն ու հարաբերություններն ամրապնդելու ուղղությամբ: Բացի այդ, ՈԱ պատասխանատուների գործառույթներից է եղել այդ աշխատանքները խթանելը՝ անհրաժեշտ խորհրդատվություններ տրամադրելով, առկա խնդիրների վերհանմամբ և լուծման ուղիների առաջադրմամբ:

7. Որակի ապահովման ներքին համակարգ

Որակի ապահովման քաղաքականությունը գործնականում իրականացվում է հաստատության ռազմավարական պլանին համապատասխան, որը վերանայվել է 2020 թվականին:

Համալսարանի ռազմավարական ծրագրի նպատակներում հստակ ներկայացվում է համալսարանի գործունեության տարբեր ոլորտներում նրա շահակիցների ներգրավվածությունը, նրանց դերակատարությունը ՈԱ գործընթացներում: Այս առումով հատկանշական է այն, որ հաշվետու ժամանակահատվածում ՈԱ հանձնաժողովի հետ համատեղ շարունակվել են Ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման աշխատանքները:

ԱԲՀ-ում գործում է ներքին և արտաքին շահակիցների հետադարձ կապի քաղաքականություն. ներքին շահակիցների խնդիրները քննարկվում են կառավարման մարմիններում, յուրաքանչյուր կիսամյակի քննաշրջանի արդյունքներն ամփոփվում են ամբիոնների նիստերում, գիտական խորհուրդներում և ռեկտորատի նիստերում, քննարկվում են նաև ընթացիկ ստուգումների արդյունքները:

ՈՆԱ գործընթացների վերաբերյալ ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի, ՈԱ առաջատար մասնագետի կազմակերպած հանդիպումները վարչական, ուսումնական ստորաբաժանումների աշխատակիցների հետ, բաց քննարկումները, տրամադրված խորհրդատվությունն ու աջակցությունը ընդլայնում է շահակիցների երկխոսությունը դասավանդման, ուսումնառության համակարգային խնդիրների վերաբերյալ, նպաստում են հետադարձ կապի մշակույթի զարգացմանը:

ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորը մասնակցել է ԿԳՄՍՆ-ի կողմից կազմակերպված հանդիպումներին՝ նվիրված ուսումնական գործընթացի (ընդունելություն, ուսման վարձի փոխհատուցում, ուսանողների շրջանում տեղեկատվության բարձրացում) և ներբուհական հարցերի կարգավորմանն ուղղված աշխատանքների բարելավմանը, ինչպես նաև ընդգրկվել է

ԿԳՄՍՆ-ի նախաձեռնած բարձրագույն կրթական ծրագրերի լիցենզավորման պայման-պահանջների վերանայման նպատակով ձևավորված աշխատանքային խմբի աշխատանքներում:

Հաշվետու ժամանակահատվածում ՈԱ առաջատար մասնագետը մասնակցել է անգլերենի վերապատրաստման դասընթացների՝ լեզվի իմացությունը բարելավելու նպատակով: Բժշկակենսաբանական առարկաների ամբիոնի վարիչն ընդգրկվել է ՈԱԱԿ հիմնադրամի կողմից ձևավորված աշխատանքային խմբում՝ մասնագիտության կրթական ծրագրերի համակարգային վերլուծություն իրականացնելու նպատակով: Բնագիտական առարկաների ամբիոնի վարիչ Հ.Ջավրուշյանը և դասախոս Հ.Հովհաննիսյանը մասնակցել են ՄԿՈՒ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագետների նախապատրաստման եռօրյա դասընթացների /04.10.2022թ.-06.10.2022թ./:

ՈԱ առաջատար մասնագետը մասնակցել է ՄԿԿՏՀ-ի վերաբերյալ աշխատանքային քննարկմանը՝ ներդրված ծրագրի կիրարկմանը նվիրված:

ԱԲՀ ՈԱ պատասխանատուները մշտական կապի մեջ են ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի կրթության որակի ապահովման մասնագետների հետ:

ԿԲ և ՈԱ գծով պրոռեկտորը, ՈԱ առաջատար մասնագետը հուլիս ամսին գործուղվել են Արցախի Հանրապետություն, ԱՀ քաղծառայողների հերթական վերապատրաստման նպատակով: Գործուղման ընթացքում դասախոսություններ են կարդացել կրթության որակի ապահովման, կրթության որակի վերահսկողության վերաբերյալ:

ՈԱ գործընթացների իրականացման համար տրամադրվող մարդկային, ֆինանսական, ժամանակային և նյութատեխնիկական ռեսուրսները հնարավորություն են ընձեռել դիտարկվող ժամանակահատվածում (2021-2022 թթ.) պլանավորել, իրականացնել մի շարք աշխատանքներ և բարելավումներ, մասնավորապես՝

1. ամբիոնների գործունեության մշտադիտարկում,
2. ամբիոնների հաշվետվությունների վերլուծություն,
3. ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ուղղությամբ աշխատանքներ,
4. ուսումնական գործընթացն ապահովող ռեսուրսներից և տրամադրվող ծառայություններից ուսանողների բավարարվածության հարցում,
5. ստացած կրթությունից բավարարվածության հարցում շրջանավարտների շրջանում,
6. պրակտիկայից ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցում,
7. հարցումների արդյունքները վերլուծվում և քննարկվում են ԱԲՀ ամբիոնների նիստերին, ԳԽ նիստերին, ընդունվում են համապատասխան որոշումներ՝ ըստ ներկայացված բարելավման առաջարկների,
8. վերանայվում է Որակի ներքին ապահովման ձեռնարկը (հաստատված՝ 2018թ.-ին):

9. ԳԻՏԱԿԱՆ ՄԱՍ

Համալսարանում հաշվետու ժամանակահատվածում ուսումնական գործընթացում ներգրավված են եղել 56 մասնագետ, որոնցից 3-ը ունեն դոկտորի գիտական աստիճան, իսկ 29-ը՝ գիտությունների թեկնածուի աստիճան:
Համալսարանի դասախոսների մի մասն ուսումնական գործընթացին զուգահեռ զբաղվում է նաև մասնագիտական և գիտական գործունեությամբ:

Համալսարանում դասախոսող գիտնականների կողմից հաշվետու ժամանակահատվածում հրատարակվել է մեկ ուսումնամեթոդական ձեռնարկ, հեղինակվել կամ համահեղինակվել են 37 հոդված, 6 գրքի գլուխ, որոնց ընդհանուր թվից 28-ը՝ արտերկրում: Մեր դասախոսները մասնակցել են տեղական և միջազգային գիտաժողովների, որոնցից մի քանիսում հանդես են եկել զեկույցներով և/կամ տպագրել են հոդված գիտաժողովի ամփոփիչ ձեռնարկներում: Դասախոսներից 13-ն անցել են մասնագիտական վերապատրաստումներ:

ԱԲՀ ուսանողներից երեքն ունեցել են տպագրություններ հոդվածների կամ թեզիսների տեսքով:

ԱԲՀ-ի դասախոսներն իրենց գիտական ձեռքբերումների մասին զեկուցել են հանրապետական և միջազգային գիտաժողովներում, ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում՝ միջազգային գիտաժողովներին:

Համալսարանում դասախոսող գիտամանկավարժական անձնակազմի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացված գիտական գործունեության վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է գծապատկերներում:

Գծապատկեր № 1

ԱԲՀ-ի դասախոսների գիտական գործունեության ամփոփ պատկերը 2021-2022 թթ.:



ԱԲՀ-ի դասախոսների գիտական գործունեությունը վերջին 3 տարիների համար

Գծապատկեր № 2



Գծապատկեր № 3

ԱԲՀ-ի աշխատակիցների ՀՀ և արտերկրում ունեցած գիտական հրապարակումների հարաբերակցությունը 2021-2022 թթ.:



Գծապատկեր № 4

ԱԲՀ-ի աշխատակիցների ՀՀ և արտերկրում ունեցած գիտական հրապարակումները վերջին 3 տարիներում



Համեմատելով նախորդ տարիների հետ, հաշվետու տարում դասախոսական կազմի կողմից գիտահետազոտական հոդվածների, թեզերի և աշխատությունների հրատարակումների թիվը որոշակի ավելացել է: Իհարկե, այս ամենին որոշ խթան կարող է հանդիսացել ԱԲՀ-ի ղեկավարության կողմից սահմանված խրախուսման համակարգը:

Հաշվետու տարվա ձեռքբերումներից է եղել ՈՒԳԸ-ի ակտիվացումը: 2021-2022 ուստարվա ընթացքում համալսարանի երկու ուսանողներ՝ Զիյադ Թարիք Ջամալը և Աֆրոդին Կամիլը գիտական ղեկավարների հետ համատեղ պատրաստել են գիտական հոդվածներ և ելույթներով հանդես են եկել միջազգային գիտաժողովներում: Ամրապնդվել է Գիտական մասի կապն ՈՒԳԸ-ի հետ՝ մեծացնելով ՈՒԳԸ ներգրավվածությունն ուսանողների աշխատանքներում և ուսումնառության գործընթացում: Գիտական մասի կողմից կատարվել են բարեփոխումներ ՈՒԳԸ կանոնադրության մեջ, մասնավորապես՝ ներմուծվել է ուսանող-ծրագրավարների (facilitator) ներգրավման համակարգը, ինչն ավելի շատ նախադրյալներ և լծակներ է ստեղծել ուսանողներին գիտական աշխատանքներում ներգրավելու համար: Մանրամասն տեղեկատվությունը հասանելի է ԱԲՀ գիտական մասի 2021-2022 հաշվետվությունում և ՈՒԳԸ վերանայված կանոնադրությունում:

ԱԲՀ գիտական մասի կողմից մշակվել և իրագործվել է «ԱԲՀ Բաց գիտություն» ծրագիրը, որի շրջանակներում պարբերաբար կազմակերպվում են բաց դասախոսություններ հրավիրված գիտնականների կողմից, որին ներկա են լինում ոչ միայն ԱԲՀ ուսանողները, այլև գիտնականներ, բժիշկներ և ուսանողներ այլ բուհերից, բժշկական և գիտահետազոտական կենտրոններից: Այս ծրագրի շնորհիվ կոնսոլիդացվում է փոխկապակցվածությունն ուսումնառության գործընթացի և գիտահետազոտական աշխատանքների միջև, ինչպես նաև ամրապնդվում է կապը տեղացի և արտասահմանցի ուսանողների և մասնագետների միջև:

1. 2022թ. հունիսի 21-ին, ժ. 15:00 տեղի ունեցավ «ԱԲՀ Բաց Գիտություն» նախագծի առաջին միջոցառումը, որի շրջանակում դասախոսությամբ հանդես եկավ «BIO-SEE International Bioimaging Society» միջազգային ասոցիացիայի համակարգող, բժշկական տեխնոլոգիաների մասնագետ, բժիշկ Գևորգ Դոնոյանը: Դասախոսության թեման էր՝ Հիպերսպեկտրալ պատկերում:

2. Երկրորդ միջոցառումը տեղի ունեցավ 2022թ. հուլիսի 21-ին, ժ. 15:00, հիբրիդային ֆորմատով: Բոլոնիայի համալսարանի և Բոլոնիայի Նյարդաբանական գիտությունների ինստիտուտի բժիշկ, իտալացի նեյրոհոգեբույժ Յակոպո Պրուկկոլին հանդես եկավ դասախոսությամբ սնման և ախորժակի խանգարումների թեմայով:

Միջոցառումներին մասնակցել են ուսանողներ և մասնագետներ ինչպես ԱԲՀ-ից, այնպես էլ այլ բուհերից և գիտահետազոտական կենտրոններից:

10. ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ավանդական բժշկության համալսարանը 2021-2022 ուսումնական տարում «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների գծով պատրաստել է բժշկական կադրեր՝ անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով:

2021-2022 ուստարում համալսարանում սովորել են հիմնականում օտարազգի ուսանողներ, դասավանդումն իրականացվել է անգլերենով, սակայն ԿԳՄՍ նախարարի հրամանով գարնանային կիսամյակում «Սուրբ Թերեզայի անվան բժշկական համալսարանից» ուսումը շարունակելու նպատակով ԱԲՀ ստոմատոլոգիական ֆակուլտետ տեղափոխվեցին նաև հայ ուսանողներ, որոնց ուսուցումը, բնականաբար, կազմակերպվեց հայերեն:

2021-22 ուսումնական տարում ֆակուլտետների դեկանի աշխատանքները կազմակերպվել են տաեկան աշխատանքային պլանին համապատասխան:

1. 2020-2021 ուսումնական տարվա համեմատ, հաշվետու տարում ավելացել է համալսարանում օտարերկրյա սովորողների թվաքանակը, նույնն է մնացել համալսարանի ուսանողների աշխարհագրական շրջանակը: Այսպես, հաշվետու ուսումնական տարում համալսարանում սովորել են ուսանողներ Հնդկաստանից, Իրաքից, Իրանից Գերմանիայից, Իռլանդիայից, Մեծ Բրիտանիայից, Հորդանանից, Շվեդիայից, Ուկրաինայից, Շրի Լանկայից, Ֆիլիպիններից:

   Ցավոք, պետք է կրկին արձանագրենք, որ 2021-2022 ուստարում ևս հայ ուսանողների ընդունելություն, կարելի է ասել, չի եղել, կենտրոնացված միասնական ընդունելությամբ ԳԹԿ-ի տվյալներով ստոմատոլոգիական ֆակուլտետ ընդունվել է ընդամենը 1 դիմորդ, որն էլ վերցրել է տարկետում՝ պարտադիր զինվորական ծառայության մեկնելու կապակցությամբ:

2. 2021-2022 ուսումնական տարվա տարեսկզբին բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով եղել են /նախորդ ուստարվա ամառային քննաշրջանի արդյունքներով փոխադրված և 1-ին կուրս ընդունված/ թվով 400, իսկ տարեվերջին՝ 530 ուսանող /78 շրջանավարտ/:

<u>Գծապատկեր № 1</u>



Գծապատկեր № 2



Գծապատկեր № 3



Նախորդ տարվա համեմատ հաշվետու տարում արձանագրվել է «Բուժական» ֆակուլ-տետի առաջին կուրս ընդունված ուսանողների թվաքանակի ավելացում: Բացի այդ, նաև

«Բուժական» և «Ստոմատոլոգիական» ֆակուլտետներում սովորած ուսանողների ընդհանուր թվաքանակի ավելացում՝ կապված ԿԳՄՍ նախարարի հրամանով գարնանային կիսամյակում «Սուրբ Թերեզայի անվան բժշկական համալսարանից» ուսումը շարունակելու նպատակով ԱԲՀ տեղափոխված ուսանողների քանակի հետ:

2021-2022 ուսումնական տարվա ընթացքում «Բուժական» և «Ստոմատոլոգիական» ֆակուլտետներում ուսանողների շարժը ներկայացված է ստորև գծապատկերում:

Գծապատկեր № 4



3. Հաշվետու տարում ժամանակին կազմվել, ռեկտորատում հաստատվել և հասանելի են եղել են երկու ֆակուլտետների ուսումնական տարվա ուսումնական օրացույցները, աշնանային և գարնանային կիսամյակների դասացուցակները, միջանկյալ ստուգումների, քննաշրջանների, լուծարքների ժամանակացույցները:
4. 2021-2022 ուսումնական տարում 2 կիսամյակների ընթացքում կայացել են համալսարանի ամբիոնների նիստեր, որտեղ քննարկվել են ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքը տվյալ ամբիոնում, վերլուծվել են ուսանողների առաջադիմության արդյունքները, լուծարքների արդյունքները, վերհանվել են որոշ խնդիրներ՝ կապված ուսումնաարտադրական պրակտիկայի, գնահատման համակարգի, ուսանողների գործնական հմտությունների և կարողությունների բարելավման և այլ հարցերի հետ:
5. Հաշվետու շրջանում պատշաճ կերպով ամբիոններում կազմակերպվել են առարկայական խորհրդատվություններ:
6. Հաշվետու տարում դեկանի, Արտաքին կապերի բաժնի մասնագետների և կուրսերի խորհրդատուների կողմից բազմիցս կազմակերպվել են անհատական հանդիպումզրույցներ ցածր առաջադիմություն ունեցող, բացակայող ուսանողների հետ, բացատրությունների միջոցով տարվել են համապատասխան աշխատանքներ:
7. Հաշվետու ուստարվա երկու կիսամյակների ընթացքում բոլոր կուրսերում, համապատասխան կուրսի խորհրդատուի, ուսումնական մասի վարիչի, ուսանողական խորհրդի

նախագահի հետ միասին բոլոր կուրսերում անցկացվել են խորհրդակցություններ, որտեղ քննարկվել են ֆակուլտետների կուրսերի առաջադիմությունը, հաճախումների վիճակը, կազմակերպչական այլ հարցեր:

8. Կազմակերպվել են 2021-2022 ուստարվա ձմեռային և ամառային քննաշրջանները, լուծարքները և վերահսկվել է դրանց ընթացքը:
   - Հաստատվել և շահակիցներին հասանելի են դարձել 2021-2022 ուսումնական տարվա ձմեռային և ամառային քննաշրջանների ժամանակացույցները՝ դրանք նախապես համաձայնեցնելով ուսանողների հետ:
   - 2021-2022 ուսումնական տարվա երկու քննաշրջանների ընթացքում ըստ կուրսերի և խմբերի քանակի կազմակերպվել և անցկացվել են 127 (93/34) ստուգարք և 69 (52/17) քննություն ձմեռային քննաշրջանի և 131 (86/45) ստուգարք և 102 (78/24) քննություն ամառային քննաշրջանի ընթացքում (աղյուսակ 1):

<u>Աղյուսակ № 1</u>

ԲՈՒԺԱԿԱՆ ԵՎ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ ԵՎ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿ

Ֆակուլտետ	Ձմեռային քննաշրջան		Ամառային քննաշրջան		Տարեկան	
	Ստուգ.	Քննութ.	Ստուգ.	Քննութ.	Ստուգ.	Քննութ.
Բուժական	93	52	86	78	179	130
Ստոմատոլ.	34	17	45	24	79	41
Ընդամենը	**127**	**69**	**131**	**102**	**258**	**171**

- *Ստուգարքների և քննությունների քանակը հաշվարկած է ըստ առկա խմբերի քանակի*
- 2021-2022 ուսումնական տարվա քննաշրջաններից առաջ և հետո երկու ֆակուլտետ-ների բոլոր կուրսերում կազմակերպվել են կուրսային խորհրդակցություններ, որոնցում քննարկվել են քննաշրջանի հետ կապված կազմակերպչական և այլ հարցեր և ապա, քննությունների ավարտից հետո, վերլուծվել են տվյալ կուրսի քննաշրջանի արդյունքները, հատկապես բարձրացվել է ակադեմիական պարտքեր ունեցողների հարցը, տեղեկացվել նրանց՝ հասանելի դարձնելով լուծարքների անցկացման ժամանակացույցը:
- Քննություններից առաջ բոլոր քննական առարկաներից դասախոսներն անցկացրել են խորհրդատվություններ:
- Ամփոփվել են ֆակուլտետների կիսամյակային տարեկան ընդհանուր և որակական առաջադիմությունները /աղյուսակներ 4,5,6/:
- 2021-2022 ուսումնական տարում «Բուժական» ֆակուլտետում ձմեռային քննաշրջանի ընդհանուր առաջադիմությունը կազմում է ***89,0*** %, իսկ որակականը՝ ***67,0*** %

- Ձմեռային քննաշրջանում ակադեմիական պարտքերի քանակը բուժական ֆակուլտետում կազմել է **347** /անբավարար՝ 172 և չներկայացած՝ ***175***/, որից լուծարքների ժամանակ մարվել են **173**-ը:
- 2021-22 ուսումնական տարում «Բուժական» ֆակուլտետում ամառային քննաշրջանի ընդհանուր առաջադիմությունը կազմում է ***88,0*** %, իսկ որակականը՝**48,7** %:

Ակադեմիական պարտքերի քանակը կազմում է **378** /անբավարար՝ 222 և չներկայացած՝ 156/, որից լուծարքների ժամանակ մարվել են 144-ը, 234-ը չի մարվել:

Այսպիսով, «Բուժական »ֆակուլտետում 2020-2021 ուստարվա համեմատությամբ / 90,0 % ընդհանուր, 64,7% որակական / 2021-2022 ուստարվա տարեկան առաջադիմությունը կազմել է ***88,2***%, որակականը՝ **/62,9%/, «**Բուժական» ֆակուլտետի ընդհանուր և որակական առաջադիմությունները, կարելի է ասել, մնացել են նույն տիրույթում /աննշան նվազել են/: Համեմատաբար ցածր ընդհանուր առաջադիմություն է գրանցվել երկրորդ կուրսում /**76,0**%/, երրորդ կուրսում /**80,0**%/: Առավել բարձր առաջադիմություն է գրանցվել 6-րդ /**99,0**/, 4-րդ /**95,5**/, 5-րդ /**93,0**/ կուրսերում:

Ֆակուլտետի որակական առաջադիմության վրա բացասական ազդեցություն թողեց «Սուրբ Թերեզայի անվան համալսարանից» տեղափոխված ուսանողների որակական առաջադիմությունը:

Աղյուսակ № 2

ԲՈՒԺԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ (ձմեռային և ամառային քննաշրջաններ)
ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

Կուրս, խումբ	Ձմեռային քննաշրջան		Ամառային քննաշրջան		Տարեկան առաջադիմություն	
	Ընդհ. առաջ.%	Որակ. առաջ.%	Ընդհ. առաջ.%	Որակ. Առաջ.%	Ընդհ. Առաջ.%	Որակ. Առաջ.%
101խ.	*94,0*	*68,4*	*83,7*	*54,2*	*89,0*	*61,3*
102խ.	*92,0*	*51,1*	*83,5*	*43,0*	*88,0*	*47,0*
103խ.	*84,0*	*48,7*	*77,4*	*30,0*	*80,5*	*39,4*
I	**90,0**	**56,0%**	**81,5**	**42,4**	**86,0**	**49,2**
201խ.	*89,0*	*65,4*	*66,4*	*38,7*	*78,0*	52,0
202խ.	*82,5*	*61,6*	*81,7*	*55,5*	*82,0*	58,5
203խ.	*71,4*	*55,3*	*62,5*	*42,0*	*67,0*	48,6
II	**81,0**	**61,0%**	**70,2**	**45,4**	**76,0**	**53,2**
301խ.	*67,6*	*40,0*	*75,0*	*49,3*	*72,0*	56,0
302խ.	*79,0*	*51,0*	*94,0*	*73,4*	*86,5*	62,2
303խ.	*69,0*	*37,5*	*87,3*	*74,6*	*78,0*	56,0
304խ.	*81,25*	*56,2*	*87,5*	*74,0*	*84,2*	65,1
304 ա խ.	-	-	*88,3*	*40,0*	*88,3*	40,0
III	**74,2**	**46,0**	**86,42**	**62,3**	**80,0**	**55,8**
401խ.	*96,4*	*81,2*	*100*	*87,7*	*98,0*	84,5
402խ.	*95,0*	*82,4*	*96,2*	*83,0*	*96,0*	82,7
403խ.	*95,0*	*73,3*	*96,6*	*74,0*	*96,0*	73,6
404խ.	*94,0*	*82,2*	*99,3*	*88,0*	*96,5*	85,1
404 ա խ.			*91,2*	*64,8*	*91,0*	65,0
IV	**95,0**	**80,0 %**	**96,6**	**64,8**	**95,5**	**78,2**
501խ.	*96,8*	*74,7*	*99,4*	*81,7*	*98,0*	**78,2**
502խ.	*100*	*83,3*	*98,4*	*82,8*	*99,0*	**83,1**
502 ա խ.	-	-	*82,4*	*65,2*	*82,4*	**65,2**
V	**98,4**	**79,0**	**93,4**	**76,5**	**93,0**	**77,8**
601	*94,75*	80,0	*100*	*81,0*	*95.5*	80,5
602	-	-	*100*	*63,0*	*100*	63,0
603	-	-	*100*	*46,0*	*100*	46,0
VI	***94,75***	***80,0 %***	**100**	**63,3**	**99,0**	**63,2**
Ընդամենը	***89,0 %***	***67,0 %***	***88,0 %***	***48,7***	***88,2 %***	***62,9***

➢ 2021-2022 ուսումնական տարում «Ստոմատոլոգիական» ֆակուլտետում ձմեռային քննաշրջանի ընդհանուր առաջադիմությունը կազմում է ***84,8*** %, իսկ որակականը՝ ***56*** %:

Ձմեռային քննաշրջանի ակադեմիական պարտքերի քանակը կազմում է 76 /անբավարար **42** և չներկայացած **34** /, որից լուծարքների ժամանակ մարվել են 52-ը:

✓ 2021-2022 ուստարում «Ստոմատոլոգիական» ֆակուլտետում ամառային քննաշրջանի ընդհանուր առաջադիմությունը կազմում է 86,7 %, իսկ որակականը՝ 59,0 %:

✓ Ֆակուլտետի առաջադիմության վրա բացասական ազդեցություն թողեց Սուրբ Թերեզայի անվան համալսարանից տեղափոխված ուսանողների որակական առաջադիմությունը:

✓ Ամառային քննաշրջանի ակադեմիական պարտքերի քանակը կազմում է 108 /անբավարար 71 և չներկայացած 37/, որից լուծարքների ժամանակ մարվել են 64-ը, 44-ը չի մարվել:

✓ «Ստոմատոլոգիական» ֆակուլտետում համեմատաբար բարձր առաջադիմություն է գրանցվել անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով 3-րդ, 4-րդ, 5-րդ կուրսերում: «Ստոմատոլոգիական» ֆակուլտետում տարեկան ընդհանուր առաջադիմությունը կազմում է 85,6, իսկ որակականը՝ 57,0 %:

Աղյուսակ № 3

2021-2022 ուստարի
ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ (ձմեռային և ամառային քննաշրջաններ)
ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

Կուրս,խումբ	Ձմեռային քննաշրջան		Ամառային քննաշրջան		Տարեկան առաջադիմություն	
	Ընդհ. առաջ.%	Որակ. առաջ.%	Ընդհ. առաջ.%	Որակ. Առաջ.%	Ընդհ. Առաջ.%	Որակ. Առաջ.%
I	***69,0***	***36,5*** %	***75,0***	***38,0***	***72,0***	***37,3***
II	***74,0***	***52,0*** %	***76,6***	***50,0***	***75,3***	***51,0***
III	***91,0***	***63,6*** %	***89,0***	***83,3***	***90,0***	***73,5***
405 406 407	*95,7* - -	*75,7* % - -	*92,3* *95,0* *91,3*	*61,0* *71,0* *52,7*	*94,0* *95,0* *91,0*	*68,4* *71,0* *52,7*
IV	**95,7**	***75,7***	***83,2***	***58,3***	***93,3***	***64,0***
V	***94,5***	***52,2*** %	***100***	***65,2***	***97,2***	***58,7***
Ընդամենը	***84,8***	***56,0*** %	***84,8***	***59,0***	***85,6***	***57,0***

✓ Այսպիսով, 2020-2021 ուստարվա համեմատությամբ (91,0%) ընդհանուր, 65,0%, որակական /2021-2022 ուստարվա «Ստոմատոլոգիական» ֆակուլտետուի ընդհանուր և որակական առաջադիմությունները քիչ նվազել են /***85,6*** % և ***57,0*** %/:

➢ 2021-2022 ուստարում 2020-2021 ուստարվա համեմատությամբ «Բուժական» և «Ստոմատոլոգիական» ֆակուլտետների ընդհանուր և որակական առաջադիմությունները էական տարբերություններ չունեն: Երկու ֆակուլտետների քննաշրջանների առաջադիմության արդյունքների վերլուծությունից պարզվեց, որ պետք է բարելավել՝ «Մարդու անատոմիա», «Հյուսվածաբանություն, էմբրիոլոգիա, բջջաբանություն», «Նորմալ ֆիզիոլոգիա», դասընթացների դասավանդման դրվածքը:

Գծապատկեր № 5



Գծապատկեր № 6



Գծապատկեր № 7



Ըստ ժամանակացույցների կազմակերպվել են 2021-2022 ուսումնական տարվա ձմեռային և ամառային քննաշրջանների լուծարքների I և II փուլերը, որի արդյունքները ներկայացվում են ստորև՝

Աղյուսակ № 4

2021-2022 ՈՒՍՏԱՐԻ
ԲՈՒԺԱԿԱՆ ԵՎ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՔԱՆԱԿ

Ֆակուլտետ	Ձմեռային քննաշրջան		Ամառային քննաշրջան	
	Անբավ./Չներկ.	Հանձ./Չհանձ.	Անբավ./Չներկ.	Հանձ./Չհանձ.
Բուժական	**172/165**	**164/173**	**222/156**	**144/ 234**
Ստոմատոլոգիական.	**42/34**	**52/24**	**71/37**	**64/ 44**
Ընդամենը	**214/ 199**	**216/197**	**294/193**	**208 /278**

Գծապատկեր № 8



Գծապատկեր № 9



Գծապատկեր № 10



2021-2022 ուսումնական տարում կազմակերպվել են «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների ավարտական կուրսի ուսանողների համար ամփոփիչ ատեստավորումները երկու փուլով՝

- ✓ հունիսին՝ 601 խմբի համար,
- ✓ սեպտեմբեր-հոկտեմբերին՝ 602 և 603 խմբերի համար /ԿԳՄՍ նախարարի հրամանով գարնանային կիսամյակում «Սուրբ Թերեզայի անվան բժշկական համալսարանից» ուսումը շարունակելու նպատակով ԱԲՀ բուժական ֆակուլտետի ավարտական կուրս տեղափոխված ուսանողներ/:

Գիտական խորհուրդ են ներկայացվել ըստ ֆակուլտետների ամփոփիչ ատեստավորումներին թույլատրվող ուսանողների մասին զեկուցագրերը, որի հիման վրա տրվել են հրամաններ:

2021-2022 ուս. տարում համալսարանն ունեցել է անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով 78 շրջանավարտ՝

- ❖ «Բուժական գործ»՝ մասնագիտություն՝ 19 + 45
- ❖ «Ստոմատոլոգիա» մասնագիտություն՝ 14:

ԲՈՒԺԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ /601 խումբ/

Առարկա	Ուսանող	Գերա-զանց	Լավ	Բավար.	Անբավ.	Չի ներկայացել
«Ներքին հիվանդություններ»	19	4	8	7	-	-
«Մանկաբարձություն և գինեկոլոգիա»	19	13	4	2	-	-
«Վիրաբուժական հիվանդություններ»	19	14	4	1	-	-

ԲՈՒԺԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

/602,603 խումբ, Ս.Թերեզայի անվ համալսարանից տեղափոխված ուսանողներ/

Առարկա	Ուսանող	Գերա-զանց	Լավ	Բավար.	Անբավ.	Չի ներկայացել
«Ներքին հիվանդություններ»	45	4+1	9+5	10+16	-	-
«Մանկաբարձություն և գինեկոլոգիա»	45	5+3	13+9	5+10	-	-
«Վիրաբուժական հիվանդություններ»	45	7+4	7+6	9+12	-	-

Գծապատկեր № 11



Գծապատկեր № 12



Ամփոփելով ամփոփիչ ատեստավորման առաջադիմության արդյունքներն՝ արձանագրեցինք, որ ընդհանուր առմամբ ուսանողները ցուցաբերել են ձեռքբերած գիտելիքները, «անբավարար» գնահատական ստացող չի եղել, հանձնաժողովները գոհ էին ուսանողների գիտելիքներից:

Հաշվետու տարում գիտխորհրդին են ներկայացվել ձմեռային և ամառային քննաշրջանների հետ կապված առաջադիմության և լուծարքների արդյունքները:

Երկու ֆակուլտետների ուսումնական պլաններով նախատեսված 2021 -2022 ուստարվա ամառային ուսումնաարտադրական պրակտիկաները իրականացվել են հաստատված ժամանակացույցին համապատասխան, ուսանողները հանձնել են ստուգարքը:

Դեկանի և ուսումնական մասի վարիչի կողմից ներկայացվել են ուսումնական գործընթացի բարելավման առաջարկներ.

- ✓ Բարելավել համալսարանի ընդունելության պլանավորումը՝ անպայման ներգրավելով հայ ուսանողներին և ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ դիմորդների կայուն հոսքի և ուսանողների համակազմի պահպանման համար:
- ✓ Շարունակել ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ՝ լիցենզիայի շրջանակներում ապահովելով համալսարանի «Ստոմատոլոգիական» ֆակուլտետի դիմորդների կայուն հոսք և թվաքանակ:
- ✓ Ուսանողների մոտ գործնական հմտություններն ու կարողությունները բարելավելու նպատակով ստեղծել համալսարանական սիմուլյացիոն սենյակ, ինչպես նաև ընդլայնել բազմապրոֆիլ և մասնագիտացված կլինիկաների քանակը:
- ✓ բարելավել որոշ դասընթացների՝ «Մարդու անատոմիայի», «Հյուսվածաբանություն, էմբրիոլոգիա, բջջաբանության», «Նորմալ ֆիզիոլոգիայի» դասավանդման դրվածքը:
- ✓ համալսարանում գործող «Գիտելիքների ստուգման և գնահատման» կարգի Լուծարքներ բաժնում կատարել փոփոխություն: Տվյալ կուրսի համար կազմել նախապայման հանդիսացող մասնագիտական առարկաների ցանկ, որոնց ակադեմիական պարտքերի հանձնումը պարտադիր է տվյալ կիսամյակի լուծարքների ժամանակ, այլ ոչ թե հաջորդ կիսամյակում:
- ✓ Համաձայն Համալսարանում գործող «Գիտելիքների ստուգման և գնահատման» կարգի, ուսանողներին հնարավորություն տալ մինչև 12 կրեդիտ կազմող չմարված ակադեմիական պարտքերը վերահանձնել հաջորդ կիսամյակի քննաշրջանի վերահանձնումների 2 փուլերի ընթացքում:

11. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ

ՄՌԿ և ընդհանուր բաժինը 2021-2022 ուսումնական տարում շարունակել է իր գործունեությունը՝ իր կանոնադրության, ՄՌԿ քաղաքականության և ԱԲՀ ներքին կանոնակարգերի համաձայն:

2021-2022 ուսումնական տարում աշխատողների թիվը կազմել է 95 մարդ, որից 56-ը՝ պրոֆեսորադասախոսական կազմն է:

Համալսարանի անձնակազմի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև (գծապատկեր 1 և 2-ում):

Գծապատկեր № 1

Պրոֆեսորադասախոսական կազմի համեմատական տվյալներ



Համալսարանում ընդհանուր պրոֆեսորադասախոսական կազմից (56) 38-ը կին դասախոսներ են: Ի տարբերություն նախորդ տարվա, հաշվետու տարում դասախոսական կազմը մնացել է նույնը, իսկ ընդհանուր գիտական ներուժի համալրումը նվազել է՝ 3 պրոֆեսոր, 4 դոցենտ և 22 գիտությունների թեկնածու: Ներկայացված պատկերը փոփոխական է՝ պայմանավորված ցիկլային դասընթացներում ընդգրկված դասախոսներով: Համալսարանի ղեկավարության կողմից իրականացվող դասախոսական անձնակազմի կառավարման քաղաքականությունն ակնհայտ կարելի է գնահատել դրական, քանի որ հիմնական դասախոսական թվակազմի ավելացման միտումներ են նկատվում:

Գծապատկեր № 2

Համալսարանի վարչական անձնակազմը



Հաշվետու տարում վարչական անձնակազմը համալրվել է 2 աշխատակցով /18-ից 14-ը կանայք են/: Ուսումնաօժանդակ կազմի փոփոխություն տեղի չի ունեցել:

2021-2022 ուստարվա ընթացքում կնքվել է 116 աշխատանքային պայմանագիր: Բոլոր աշխատողներն աշխատանքի ընդունվել են պայմանագրային կարգով՝ որոշակի ժամկետով:

Անձնական դիմումի համաձայն ազատվել են 22-ը /պայմանագրի լուծարմամբ, որից 7-ը հիմնական աշխատող, իսկ աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ՝ 66:

- 2021-2022 ուստարվա ընթացքում 46 դասախոսներ ընդգրկվել են պահուստային դասախոսների ցուցակում: Նախորդ՝ 2020-2021 ուստարվա դասախոսների պահուստային ցուցակից 2021-2022 ուստարվա պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկվել են Վերա Կարապետյանը՝ որպես «Ստոմատոլոգիայի» ամբիոնի դասախոս:
- Հաստիքացուցակը կազմվել է 08.01.2020թ-ին և հաստատվել կառավարման խորհրդի նիստում:
- Համալսարանում աշխատում են տարիքային 11 թոշակառուներ:
  Թոշակները ձևակերպելու և վերահաշվարկի համար աշխատանքային ստաժի մասին տրվել են համապատասխան տեղեկանքներ:
- Բաժնում աշխատանքի ընդունման, ազատման, պաշտոնի փոփոխության և բոլոր այլ հրամանները գրանցվում են հրամանագրքում:
- Բոլոր աշխատողների, ներառյալ ժամավճարային աշխատողների, անձնական գործերում առկա են հրամանները և իրավական այլ փաստաթղթերի փոփոխությունները:
- 2021-2022 ուստարվա հրամանների թիվը կազմել է 1-ից մինչև 670-ը /08.07.2022թ-ի դրությամբ/:
- Կատարվել է հրամանների կրկնօրինակների կամ քաղվածքների տրամադրում հասցեատերերին, որը հաշվառվել է գրանցամատյանում:
- Տարվա ընթացքում իրականացվել է մուտքի և ելքի փաստաթղթերի հաշվառում՝ /ելից՝ 126, մտից՝ 208/ համապատասխան գրանցամատյաններում:
  Կատարվել է դիմումների և զեկուցագրերի հաշվառում:
- Նոր ուսումնական տարվա սկզբին ուսումնական մասի հետ տրվել է վիճակագրական հաշվետվություն ՀՀ վիճակագրական կոմիտե, հիմնականում պրոֆեսորադասախոսական կազմի, նրանց զբաղեցրած պաշտոնների, դրույքաչափերի մասին: Բոլոր տվյալներում առանձնացված է կանանց թիվը:
- Հաշվետու ժամանակահատվածում տրվել է 339 տեղեկանք /աշխատողներին՝ 42, ուսանողներին՝ 297/, բանկ, դեսպանատներ, դպրոցներ, սոցիալական ծառայությունների տարածքային բաժիններ ներկայացնելու համար:
- 2021-2022 ուստարվա ընթացքում պարգևատրվել է 2 աշխատակից, ինչպես նաև կատարվել է 21 աշխատակիցների աշխատավարձի բարձրացում:
- ԱԲՀ-ի 30-ամյակի կապակցությամբ համալսարանի 47 աշխատակցի տրվել են անվանական պատվոգրեր և հուշանվերներ:
- Համալսարանում պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատանքային առաջխաղացումն իրականացվում է հաշվի առնելով թեկնածուի անհատական ուղին, նրա դասախոսական և հետազոտական կարողությունները և տվյալ ոլորտում ունեցած մասնագիտական փորձը:
  2021-2022 ուստարում որպես աշխատանքային առաջխաղացում կարող ենք նշել «Բնագիտական առարկաների» ամբիոնի վարիչ, Հայարփի Ջավրուշյանի դոցենտի կոչման շնորհումը:

- ՄՌԿ և ընդհանուր բաժնի առաջարկով «Բաբելոն» ուսուցման կենտրոնի կողմից ս/թ մայիսի 17-ից մինչև հունիսի 17-ը կազմակերպվել և անցկացվել են դասախոսական կազմի թվով 28 աշխատակիցների անգլերեն լեզվի վերապատրաստում և ատեստավորում: Վերապատրաստման ավարտին 27 մասնակցի տրվել են B2 մակարդակի և 1 մասնակցի՝ C1 մակարդակի հավաստագրեր:
- ՄՌԿ և ընդհանուր բաժնի մասնակցությամբ վերանայվել և 15.02.2021 թ. Գիտական խորհրդի նիստով հաստատվել է «ԱԲՀ ներքին կարգապահական կանոնները: Տեղեկատվությունը տարածվել է ԱԲՀ աշխատակիցների և ուսանողների շրջանում:
- ԱԲՀ գործունեությանը վերաբերող բոլոր փաստաթղթերը տեղադրված են համալսարանի պաշտոնական կայքում:
- Հարկ է նշել, որ հաշվետու ուստարում ԱԲՀ էթիկայի հանձնաժողովը, որի նախագահն է ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչը, էթիկայի խախտման որևէ դեպք չի արձանագրել:

12. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆ

Ավանդական բժշկության համալսարանի Արտաքին կապերի բաժինը համալսարանի միջազգայնացմանը նպաստող ենթակառուցվածք է, որը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան, ԱԲՀ-ի և Արտաքին կապերի բաժնի կանոնակարգի հիման վրա:

Արտաքին կապերի բաժնի աշխատանքներն իրականացնում են բաժնի վարիչը և բաժնի առաջատար մասնագետը՝ ռեկտորի և համալսարանի ստորաբաժանումների հետ համատեղ:

Արտաքին կապերի բաժնի հիմնական նպատակն է ապահովել համագործակցությունը ներպետական և օտարերկրյա ուսումնական հաստատությունների և գիտական կենտրոն-ների միջև, ընդլայնել միջազգային համագործակցությունը, նպաստել ուսանողների և պրո-ֆեսորադասախոսական կազմի փոխանակման ծրագրերին:

1. ԱԲՀ օտարերկրյա ուսանողների ընդունելություն և հրամանագրում.

1.1. Մայիս-հունիս ամիսներին բաժնի կողմից կատարվել է օտարերկրյա դիմորդների ընդունելության փաստաթղթերի և չափորոշիչների նախապատրաստում:

1.2. ՀՀ ԿԳՄՍՆ կողմից սահմանված ժամկետներում (05.07.2021-15.10.2021) կատարվել է դիմորդների անձնական դիմումների ու գործերի ուսումնասիրում և ներկայացում ՀՀ ԿԳՄՍՆ՝ փորձաքննության: Ըստ ՀՀ ԿԳՄՍՆ-ի կողմից ներկայացված 20.10.2021 N27/15.2/23926-2021 գրության և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 19-ի N1712-Ա/2 հրամանի՝ վճարովի առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով ընդունելության համար օտարերկրացիների և սփյուռքահայերի փաստաթղթերի ընդունման ժամկետը երկարաձգվեց և վերջնաժամկետ սահմանվեց 2021 թվականի նոյեմբերի 30-ը, որի ընթացքում համալսարանի կողմից ևս մի քանի դիմորդների փաստաթղթեր ներկայացվեցին ԿԳՄՍՆ:

1.3. Ուսումնական մասի վարիչի և դեկանի հետ համատեղ կատարվել է օտարերկրյա դիմորդների ընդունելության հանձնաժողովի կազմի ընտրություն և հրամանագրում:

1.4. Հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին կատարվել է ՀՀ ԿԳՄՄՆ համապատասխան հրահանգների հիման վրա ուսանողների հրամանագրում:

1.5. Դեկտեմբերին կատարվել է համալսարանի օտարերկրյա ուսանողների ընդունելության արդյունքների հաստատում՝ Ուսումնական մասի վարիչի և դեկանի հետ համատեղ:

1.6. Արտաքին կապերի բաժնի հիմնական գործառույթներից է նաև օտարերկրյա ուսանողների ժամանակավոր կացության քարտերի կազմակերպման գործընթացը, որի համար բաժինը համագործակցում է ՀՀ անձնագրային և վիզաների վարչության Կենտրոնական անձնագրային բաժանմունքի հետ: Կացության քարտերի հետ կապված աշխատանքը կատարվել է 2021թ. սեպտեմբեր–նոյեմբեր և 2022թ. փետրվար-մարտ ամիսներին՝ ուսանողներին բուհ հրամանագրելուց և ՀՀ ԿԳՄՄՆ հաստատումը ստանալուց հետո: Բաժնի կողմից պատրաստվել են անհրաժեշտ փաստաթղթեր և ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ, ինչպես նաև ՀՀ անձնագրային և վիզաների վարչություն: 2021-2022 ուսումնական տարում կատարվել է նաև արդեն ԱԲՀ ուսանող հանդիսացող ուսանողների ժամանակավոր կացության քարտերի վերաձևակերպում:

2. Օտարերկրյա ուսանողների ներգրավման գործընթացը

2.1. Արտաքին կապերի բաժինը համագործակցում է ուսանողների ներգրավմամբ զբաղվող օտարերկրյա կազմակերպությունների հետ (Campus International, Study Medicine Europe և այլն):

2.2. Ուսանողների հավաքագրումը կատարվում է նաև անմիջապես բաժնի կողմից՝ արտերկրներից ստացվող անհատական դիմումների հիման վրա: Ուսանողների ներգրավումը համալսարանի կրթական գործընթացին իրականացվել է համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարության, ինչպես նաև ՀՀ Արտաքին գործերի նախարարության կողմից մշակված կարգերի համաձայն:

2.3.Արտաքին կապերի բաժինը արտահամալսարանական կառույցների հետ գտնվելով մշտական կապի մեջ (էլեկտրոնային, հեռախոսային և այլն)՝ նրանց պարբերաբար տեղեկացրել է ընդունելության կարգի մեջ կատարվող փոփոխությունների մասին, ինչպես նաև նրանց ցուցաբերել է անհրաժեշտ խորհրդատվություն, տեղեկատվություն և աջակցություն ամբողջ տարվա աշխատանքի ընթացքում:

2.4. Դիմորդների դիմումները/ հայտերը ներկայացվել են համալսարանի պաշտոնական կամ Արտաքին կապերի բաժնի էլեկտրոնային հասցեներին: Բաժնի կողմից նախնական փուլում ճշտվել է դիմորդի քաղաքացիությունը/անձնագրային տվյալները և միջնակարգ/բարձրագույն կրթության վկայականի/այլ վկայականների առկայությունը, ներկայացվել են համալսարանի կողմից առաջարկվող ծառայությունները, առավելություններն ու հնարավորությունները:

2.5. Ուսանողների հավաքագրման գործընթացն իրականացվել է ողջ տարվա ընթացքում:

2.6. Արտաքին կապերի բաժինը աշխատել է ՀՀ Արտաքին գործերի նախարարության հետ՝ օտարերկրյա քաղաքացիներին մուտքի արտոնագիր տրամադրելու համար, կատարել է հարցումներ և ստացել պարզաբանումներ:

3. Տարվա ընթացքում Արտաքին կապերի բաժնի վարիչը, ըստ անհրաժեշտության, պատրաստել և ներկայացրել է հաշվետու տեղեկանքներ ԱԲՀ ռեկտորին, ՀՀ ԿԳՄՍՆ ստորաբաժանումներ և այլն: Ինչպես նաև 2021-2022 ուստարում Արտաքին կապերի բաժնի վարիչը պատրաստել է թվով **6** արձանագրություն, որը պահվում է բաժնի առօրյա գործերում:

4. Արտաքին կապերի բաժինը բոլոր ստորաբաժանումների հետ միասին մասնակցել է ուսանողների հետ տարվող աշխատանքներին՝ հանդես գալով որպես համակարգող օղակ ուսանողների և համալսարանի ստորաբաժանումների միջև: Տարվա ընթացքում դեկանի, Ուսումնական մասի վարիչի, դասախոսների հետ միասին իրականացվել են հանդիպումներ, ժողովներ ուսանողների հետ՝ կարգապահական, ակադեմիական առաջադիմության և այլ հարցերի վերաբերյալ:

Բաժինը աջակցել է օտարերկրյա ուսանողներին ինչպես կրթական, այնպես էլ իրավական, առօրեական և այլ հարցերում՝ ստեղծելով հնարավորինս բարենպաստ պայմաններ ուսանողների համար: Ամբողջ տարվա ընթացքում ակտիվ կապ է պահպանվել ուսանողների և նրանց ծնողների հետ սոցիալական ցանցերի, էլեկտրոնային հաղորդագության և հեռախոսակապի միջոցով և նրանց հարցերին տրվել է օպերատիվ լուծում: Բաժինը նաև համագործակցել է համալսարանի ստորաբաժանումների հետ՝ ուսանողների հաճախելիության ու առաջադիմության հետ կապված հարցերի վերաբերյալ:

5. 2021-2022 ուսումնական տարում նկատվեց դիմորդների թվի որոշակի աճ: Ստորև դիագրամի տեսքով ներկայացնենք 2021-2022 ուստարվա ուսանողների ընդունելության արդյունքները համեմատած 2020-2021 ուստարվա հետ:

Գծապատկեր № 1



Ստորև դիագրամի տեսքով ներկայացնենք նաև 2020-2021 և 2021-2022 ուստարիների ուսանողների ընդունելության արդյունքները ըստ երկրների:





- *2021-2022 ուստարվա աշնանային կիսամյակում Ավանդական բժշկության համալսարան է տեղափոխվել 9 օտարերկրյա ուսանող՝*
  - *Բուժական ֆակուլտետ III կուրս՝ 1 (Հնդկաստան)*
  - *Ստոմատոլոգիական ֆակուլտետ II կուրս՝ 1 (Հորդանան)*
  - *Ստոմատոլոգիական ֆակուլտետ III կուրս՝ 2 (Իրան)*
  - *Ստոմատոլոգիական ֆակուլտետ IV կուրս՝ 5 (Ուկրաինա՝ 1, Հորդանան՝ 2, Իրան՝ 2)*
- *2021-2022 ուստարվա գարնանային կիսամյակում Ավանդական բժշկության համալսարան է տեղափոխվել 113 օտարերկրյա ուսանող՝*
  - *Բուժական ֆակուլտետ II կուրս՝ 7 (Հնդկաստան)*
  - *Բուժական ֆակուլտետ III կուրս՝ 14 (Հնդկաստան՝12, Հորդանան՝ 2)*
  - *Բուժական ֆակուլտետ IV կուրս՝ 16 (Հնդկաստան՝14, Հորդանան՝ 1, Իրան՝ 1)*
  - *Բուժական ֆակուլտետ V կուրս՝ 27 (Հնդկաստան՝26, Գանա՝ 1)*
  - *Բուժական ֆակուլտետ VI կուրս՝ 46 (Հնդկաստան)*
  - *Ստոմատոլոգիական ֆակուլտետ II կուրս՝ 1 (Հորդանան)*
  - *Ստոմատոլոգիական ֆակուլտետ IV կուրս՝ 2 (Իրան)*
- *2021-2022 ուստարվա աշնանային կիսամյակում վերականգնվել են 2 օտարերկրյա ուսանող՝*

- *Բուժական ֆակուլտետ II կուրս՝ 1 (Հնդկաստան)*
- *Բուժական ֆակուլտետ V կուրս՝ 1 (Իրաք)*

6.Համագործակցություն ուսումնական հաստատությունների և այլ կազմակերպությունների հետ, միջոցառումների կազմակերպում

Նոյեմբերի 16-ին Ավանդական բժշկության համալսարանը հյուրընկալեց Բելառուսի Հանրապետության Գրոդնոյի պետական բժշկական համալսարանի ներկայացուցիչներին նույն համալսարանի «Նորմալ ֆիզիոլոգիայի» ամբիոնի վարիչ Վիկտոր Զինչուկի գլխավորությամբ՝ ծանոթանալու համալսարանի պայմաններին, կրթական միջավայրին և առաքելությանը, քննարկելու երկու համալսարանների միջև հնարավոր համագործակցության ծրագրեր: Հանդիպման ընթացքում ստորագրվեց կրթության և գիտության ոլորտի շրջանակում համագործակցության համաձայնագիր: Առաջիկայում նախատեսվում է պրոֆեսորադասախոսական անձնակազմի, այդ թվում նաև գիտաշխատողների վերապատրաստումներ, ինչպես նաև համատեղ կոնֆերանսների, սեմինարների, սիմպոզիումների կազմակերպում, ուսանողների փոխանակում, մասնագիտական պրակտիկաների անցկացում:

Բացի վերոնշյալ կետերից հավելենք նաև, որ Ավանդական բժշկության համալսարանի և Բելառուսի Հանրապետության Գրոդնոյի պետական բժշկական համալսարանի միջև կնքված պայմանագրով նախատեսվում է նաև համատեղ հետազոտական նախագծերի իրականացում, մասնագիտական կրթական համակարգի զարգացման նորարարական մոդելների մշակում և այլն:

ԱԲՀ Գիտական խորհրդի որոշմամբ Բելառուսի Գրոդնոյի պետական բժշկական համալսարանի «Նորմալ ֆիզիոլոգիայի» ամբիոնի վարիչ Վիկտոր Զինչուկին շնորհվեց պատվավոր պրոֆեսորի կոչում:

Հյուրերը բարձր գնահատեցին ԱԲՀ-ի գործունեությունը և գոհունակություն հայտնեցին ճանաչողական այցի կապակցությամբ:

Դեկտեմբերի 19-ին «Փարավոն» ռեստորանային համալիրում տեղի ունեցավ ԱԲՀ-ի 30-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումը:

Ներկաների թվում էին Իրանի և Իրաքի դեսպանատների ներկայացուցիչներ, Հայաստանում գործող հնդկական տարբեր կրթական կազմակերպությունների անդամներ, կրթության ոլորտի մի շարք ներկայացուցիչներ, այդ թվում՝ Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի Գիտահետազոտական կենտրոնի ղեկավար, հ.գ. դոկտոր, պրոֆեսոր և ԱԲՀ «Ստոմատոլոգիական» ֆակուլտետի նախկին դեկան Կամո Վարդանյանը, «Campus International» կենտրոնի հիմնադիր նախագահ Աշոկ Կարուվարաթոդին, Գլաձոր համալսարանի ռեկտոր, ի.գ. դոկտոր, պրոֆեսոր Ժորա Ջհանգիրյանը, Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի տնօրեն Գայանե Հարությունյանը, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ռեկտոր, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ռեկտոր, ֆ.գ.թ., դոցենտ Անուշավան Մակարյանը, մի շարք երկրների դիվանագետներ, վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատակիցներ, ուսանողներ և այլոք:

Միջոցառման սկզբում ներկաներն ոտնկայս իրենց հարգանքի տուրքը մատուցեցին 44-օրյա պատերազմի ժամանակ զոհված մեր հայրենակիցների հիշատակին:

Իրենց ողջույնի խոսքով և շնորհավորանքներով ելույթ ունեցան ԱԲՀ դեկան Անահիտ Կարապետյանը, Որակի ապահովման և կրթական ծրագրերի գծով պրոռեկտոր Արայիկ Գյոզալյանը, Գլաձոր համալսարանի ռեկտոր, ի.գ. դոկտոր, պրոֆեսոր Ժորա Ջհանգիրյանը, Իրաքի դեսպանատան ներկայացուցիչները և ԱԲՀ-ի մի շարք դասախոսներ:

Երեկույթի ընթացքում երկարատև, բարեխիղճ և անբասիր աշխատանքի համար պարգևատրվեցին համալսարանի մի շարք աշխատակիցներ:

Պարգևատրումներից անմասն չմնացին նաև ԱԲՀ-ի լավագույն ուսանողները, այդ թվում ԱԲՀ ուսանողական գիտական ընկերության կողմից առավել աչքի ընկած ուսանողները:

ԱԲՀ 30-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շրջանակում կայացավ «Բնագիտական առարկաների» ամբիոնի վարիչ, կ.գ.թ. Հայարփի Ջավրուշյանի «Կենսաքիմիայի լաբորատոր ձեռնարկի» շնորհանդեսը: Ուսումնամեթոդական ձեռնարկը նախատեսված է ԱԲՀ Բուժական և Ստոմատոլոգիական ֆակուլտետների օտարալեզու ուսանողների գործնական և լաբորատոր պարապմունքների իրականացման համար: Գրքի հեղինակը ձեռնարկներից մի քանիսը անձամբ նվիրեց դահլիճում գտնվող պատվավոր հյուրերին, ինչպես նաև ԱԲՀ-ի ռեկտոր Ն. Սարիբեկյանին:

Միջոցառումն էլ ավելի գունեղ դարձրին համալսարանի տարբեր ազգությունների ուսանողների ասմունքն ու մշակութային կատարումները: Հարկ է նշել, որ նման բնույթի միջոցառումները նպաստում են տարբեր ազգության ուսանողների համախմբմանը, բարեկամական և ընկերական հարաբերությունների խորացմանը:

Արտաքին կապերի բաժինը «Campus International» կազմակերպության և «Հնդիկ ուսանող-ների բարօրության ասոցիացիա»-ի հետ միասին ակտիվ գործունեությամբ զբաղվում էր միջո-ցառման կազմակերպչական մի շարք հարցերով՝ պատրաստելով նաև համալսարանի 30-ամյա գործունեությանը նվիրված տեսահոլովակ(https://www.youtube.com/watch?v=n13QEJSi9Dg):

Միջոցառումը նկարահանվում էր «Garo's Graphic & Media» ֆոտոստուդիայի կողմից (https://www.youtube.com/watch?v=UGP6relLwos):

Վերապատրաստման դասընթացի մասնակցություն: Ավանդույթի համաձայն դեկտեմբերի 23-ին «Օպերա Սյութ հոթել» հյուրանոցի «Մոցարտ» սրահում տեղի ունեցավ ԱՓՇԱՏԿ-ի վերապատրաստման դասընթացը՝ «Օտարերկրյա որակավորումների ճանաչման արդի հիմնախնդիրները. ապագային ընդառաջ» խորագրով: Միջոցառմանը մասնակցում էին 23 բուհերի 38 ներկայացուցիչներ:

Դասընթացը նախատեսված էր ՀՀ բուհերի ղեկավար կազմի, միջազգային բաժինների և ընդունելության հարցերով զբաղվող (admission officers) անձնակազմի համար: Դասընթացը անցկացվեց ինտերակտիվ եղանակով՝ տեսական և իրական օրինակների համակցությամբ:

Դասընթացը բաղկացած էր երկու մասից: ***Առաջին մասում*** ներկայացվեց ճանաչման ռազմավարական նշանակությունը և կրթական համակարգերի բազմազանությունը, ճանաչման հիմնական սկզբունքները և չափանիշները, ինչպես նաև իրական օրինակների հիման վրա խոսվեց օտարերկրյա կեղծ որակավորում ստանալու ամենատարածված ձևերի

մասին: **Դասընթացի երկրորդ մասը** անցկացվեց Միջազգային կրթության ամերիկյան խորհուրդներ կազմակերպության հետ համատեղ և ներկայացվեց ԱՄՆ բարձրագույն կրթության համակարգը և շնորհվող որակավորումները: Մանրամասն խոսվեց համայնքային քոլեջների համակարգի մասին:

Համագործակցության ամրապնդում: 2021 թվականի հունիսի 16-ին «Ավանդական բժշկության համալսարան»-ի, «Success Point» քոլեջի և «Campus International» ՍՊԸ-ի միջև կնքած եռակողմ պայմանագրի շրջանակում 2022 թվականի փետրվարի 8-ին ԱԲՀ-ն հյուրընկալեց "Success Point" քոլեջի ներկայացուցիչներին, ինչպես նաև քոլեջի առաջին կուրսի ուսանողներին և մի քանի ծնողների:

Համալսարանը վերոնշյալ քոլեջի հետ ունի համագործակցության պայմանագիր, որի շրջանակում «Success point» քոլեջի առաջին կուրսն ավարտված ուսանողները կարող են ուսումը շարունակել ԱԲՀ-ում: Այցի նպատակն էր ծանոթանալ համալսարանի հետ, նրա առաքելությանը, համալսարանի պայմաններին և կրթական միջավայրին:

"Success Point" քոլեջի ներկայացուցիչների, ուսանողների և մի քանի ծնողների համալսարանում և Հայաստանում կատարած շրջայցի վերաբերյալ նկարահանվել են տեսահոլովակներ:

2022 թվականի մայիսի 13-ին Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում տեղի ունեցավ «Բուհ ընդունելության և որակավորումների ճանաչման վերաբերյալ հայ-նորվեգական համագործակցություն» (NACAR) ծրագրի ամփոփիչ համաժողովը: NACAR ծրագրի նպատակն էր Հայաստանում և Նորվեգիայում ակադեմիական ներուժի զարգացումը և երկու երկրների բուհերի միջև համագործակցության խթանումը՝ օտարերկրյա ուսանողների ընդունելության և ճանաչման ինստիտուցիոնալ թափանցիկ չափանիշների և ընթացակարգերի կիրառմամբ: Ծրագիրն ուղղված էր որակավորումների ճանաչման ինստիտուցիոնալ ընթացակարգերի մշակմանը:

Համաժողովին մասնակցում էին ՀՀ բուհերի 40-ից ավելի ներկայացուցիչներ, ինչպես նաև ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակիցները:

2022 թվականի հունիսի 16-ին Ավանդական բժշկության համալսարանը հյուրընկալեց «Next Learning Center» (NLC) կազմակերպության ներկայացուցիչներ բժիշկ Աշիշ Կումարին և բժիշկ Արիզ Խոջային: Հանդիպումը կազմակերպել էր "Campus International" կազմակերպության ղեկավար Աշոկ Կարուվարաթոդը:

«Next Learning Center» կազմակերպության ղեկավար և ակադեմիական խորհրդական բժիշկ Աշիշ Կումարին խոսեց FMGE նախապատրաստական դասընթացների դերի, կարևորության և առավելության մասին հնդիկ ուսանողների համար, ովքեր ուսումնասիրում են բժշկություն արտասահմանում: Նա նշեց, որ արտասահմանյան բուհերում ուսանած բոլոր հնդիկ ուսանողները պարտադիր պետք է մասնակցեն FMGE քննությանը, ինչն անհրաժեշտ է Հնդկաստանում բժշկական գործունեություն ծավալելու համար: Առանց անցնելու FMGE քննությունը հնդիկ ուսանողները, ըստ Հնդկաստանի կառավարության կողմից հաստատված կարգի, չեն կարող Հնդկաստանում աշխատեն որպես ընդհանուր բժիշկ:

Մի քանի կետեր քննարկելուց հետո կողմերը կնքեցին համագործակցության պայմանագիր: Ըստ պայմանագրի՝ Կենտրոնի կողմից առաջարկվող վերապատրաստման դասընթացների ընդհանուր տևողությունը կազմում է 3 տարի (4-րդ, 5-րդ, 6-րդ կուրսեր), առցանց կամ առկա ուսուցման ռեժիմը կարող է հարմարեցվել ըստ անհրաժեշտության: Կենտրոնը պարտավորվում է ավարտելուց և քննությունը հանձնելուց հետո ուսանողներին տալ ակադեմիական մրցանակներ և վկայականներ:

Համալսարանն էլ իր հերթին պարտավորվում է ապահովել դասասենյակ անհրաժեշտ հարմարություններով, խրախուսել ուսանողներին մասնակցել դասընթացին:

2022 թվականի հուլիսի 18-ին «Արմենիա» ռեստորանում տեղի ունեցավ Ավանդական բժշկության համալսարանի 2020-2021 ուստարվա «Բուժական» և «Ստոմատոլոգիական» ֆակուլտետների շրջանավարտների ավարտական վկայականների հանձնման հանդիսավոր արարողությունը, որին ներկա էին ԱԲՀ-ի վարչական և դասախոսական կազմը, ԱԲՀ-ի ուսանողները և շրջանավարտների ծնողներից մի քանիսը:

13. ԳԻՏԱԲԺՇԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳԲՈՒԿ-ի բժշկական օգնության և սպասարկման տեսակները չորսն են՝ բժշկական ընդհանուր պրակտիկա, ստոմատոլոգիական, ատամնատեխնիկական, ռեֆլեքսոթերապևտիկ: Աշխատողների ընդհանուր քանակը՝ 14 է, որից տասը բժիշկներ են՝ 1 հոմեոպաթ, 1 ներզատաբան, 4 ռեֆլեքսոթերապև, 1 գաստրոէնտերոլոգ, 3 ստոմատոլոգ:

Միջին բուժանձնակազմը չորսն են, որից՝ 2 բուժքույր, 1 սանիտարուհի և 1 ատամնատեխնիկ:

Կենտրոնում իրականացվում է ըստ մասնագիտությունների պրակտիկ ուսումնական գործընթաց և բուժսպասարկում, բացի դրանից նաև գիտական աշխատանքներ՝ ավանդական բժշկության բնագավառում:

- Կատարվում է հիվանդների վերլուծություն ուսանողների մասնակցությամբ, մշակվում է բուժման պլան և ինտեգրատիվ բուժում:
- Անցկացվում են բուժական պրոցեդուրաներ, ծանոթացվում է կատարման տեխնիկային և անվտանգության կանոններին:

1. «Է.Մինասյանի անվան ավանդական բժշկության» ամբիոնում կատարվում է ասեղ-այրում թերապիա, բազմասեղային ներգործություն, բուժական մերսում: Ասեղ-այրում թերապիան զուգորդվում է ֆիտոթերապիայի և ֆարմակոթերապիայի հետ:

2021թ. «Է.Մինասյանի անվան ավանդական բժշկության» ամբիոնում բուժման կուրս անցել են թվով 207 հիվանդ, իսկ ստոմատոլոգիական կաբինետում՝ 118:

Ստոմատոլոգիական բաժանմունքում բացի հիվանդների սպասարկումից, անցկացվում են ուսումնական գործնական պարապմունքներ և ուսումնաարտադրական պրակտիկաներ, որոնց ընթացքում ուսանողները ձեռք են բերում համապատասխան հմտություններ ու կարողություններ:

Օտարերկրյա ուսանողների մի մասը ցանկություն էր հայտել COVD-19 համավարակի պատճառով հետաձգված ուսումնաարտադրական պրակտիկան անցկացնել Համալսարանի ԳԲՈՒԿ-ում, որն էլ իրականացրել են մեր դասախոսները:

II կուրս /այժմ IV կուրս/–«Բուժքրոջ օգնական» ուսումնաարտադրական պրակտիկան անցկացվել է ԳԲՈՒԿ-ում:

«Թերապևտիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա» և «Ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելում» առարկաների շրջանակում ուսումնասիրել են՝

- Ստոմատոլոգիական կաբինետների կահավորում,
- Ստոմատոլոգիական գործիքներ,
- Ստոմատոլոգիական գործիքների ախտահանում, նրանց տեսակները, ավտոկլավ,
- Դեոնտոլոգիան և էրգոնոմիկան ստոմատոլոգիայում:

III կուրս /այժմ V կուրս/ – ԳԲՈՒԿ-ում անցկացրել է «Բժիշկ թերապևտի օգնական»

Ուսումնասիրել են ատամների անզգայացում և հեռացում, ատամների հարադրավորման կլինիկո-լաբորատոր փուլերը:

V կուրսի «Մանկական ստոմատոլոգի օգնական» ուսումնաարտադրական պրակտիկան ԳԲՈՒԿ-ում անցկացվել է հերթապահությունների ձևով:

Ուսումնասիրել են մանկական տարիքի կծվածքների առանձնահատկությունները /կաթնային, խառը, մշտական/, կարիեսի կանխարգելումը և բուժումը մանկական հասակում:

II կուրս (այժմ III կուրս)–«Բուժքրոջ օգնական», III կուրս (այժմ IV կուրս)–«Բժիշկ թերապևտի օգնական» և IV կուրս (այժմ V կուրս) «Բժիշկ օրթոպեդի օգնական» և «Բժիշկ վիրաբույժի օգնական» ուսումնաարտադրական պրակտիկաները կանցկացվեն 2021-2022 ուստարվա գարնանային կիսամյակում, իսկ ընթացիկ ուսումնաարտադրական պրակտիկաները կանցկացվեն նախատեսված ժամանակացույցով:

14. ԳՐԱԴԱՐԱՆ

2021-2022 ուստարում շարունակվել է գրադարանի ծառայությունների մատուցման բարելավումն ու ընդլայնումը: Աշխատանքն ակտիվ ու օպերատիվ է եղել հատկապես քննական շրջանում: Տարեցտարի ուսանողների հոսքը ընթերցասրահ ավելանում է: Դա նկատելի էր հատկապես ուսումնական տարվա երկրորդ հատվածում. ակտիվացել է հայ ուսանողների հոսքը: Ավելացել է նաև գրքատայցը (գրքերի դուրս հանումը), բացվել են բազմաթիվ գրադարանային քարտեր:

Արդեն ավանդույթ է դարձել, որ յուրաքանչյուր տարվա փետրվարի 19-ին գրադարանը պետք է հանդես գա մի նոր մտահղացմամբ: Այս տարի ևս բացառություն չէր. տեղի ունեցավ Գիրք նվիրելու օրվան և ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյանը նվիրված միջոցառում:

Միջոցառման սկզբում ներկաներն ունկնդրեցին Թումանյանի ստեղծագործություններից, այնուհետև ուսանողներին ներկայացվեց օրվա խորհուրդն ու նպատակը: Միջոցառման շրջանակում տարվա լավագույն ընթերցող-ուսանողները պարգևատրվեցին մասնագիտական գրքերով: Օրը հիշարժան էր նաև նրանով, որ գրադարանը համալրվեց նոր գրքերով: Գրադարանին իրենց հեղինակած գրքերը նվիրաբերեցին «Բնագիտական առարկաների» ամբիոնի դասախոս Ն.Ղուկասյանը և ԱԲՀ ՈԱ և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտոր, բ.գ.թ. Ա.Գյոզալյանը:

Երկարաձգվել է համագործակցությունը «Հայաստանի թվային գրադարանների ասոցիացիայի», ինչպես նաև մի շարք էլեկտրոնային շտեմարանների հետ: Ամբողջական տեղեկատվությունը տեղադրվել է կայքէջում:

Այս ուսումնական տարում վերանայվել է ԱԲՀ գրադարանի կանոնադրությունը, որը հաստատվել է Գիտական խորհրդի նիստով և տեղադրվել կայքէջում:

Հիմնովին փոփոխության է ենթարկվել կայքէջում «Գրադարան» բաժինը: Կայքէջում «Գրադարանի» համար ձևավորվել են 5 կատեգորիաներ՝ «Գրադարանի մասին», «Գրադարանից օգտվելու կանոնները», «ԱԲՀ գրքեր», «Պարբերականներ» և «էլեկտրոնային գրացուցակ»: Հիշյալ աշխատանքների շնորհիվ կայքի այցելուն մանրամասն կարող է ծանոթանալ է գրադարանի բաժանորդ դառնալու և ընթերցողական քարտ ստանալու կարգի, պայմանների, ընթերցողի պարտականությունների և այլնի մասին:

«էլեկտրոնային գրացուցակ» կազմելու ուղղությամբ հիմնական աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են:

15. ԱԲՀ ԿԱՅՔԷՋ

2021-2022 ուստարում կրթական հաստատության գործունեության վերաբերյալ հասարակության ամենատարբեր խմբերին լրատվություն է ներկայացվել ինչպես համալսարանի կայքի, այնպես էլ՝ համալսարանի ֆեյսբուքյան պաշտոնական էջի միջոցով: Օպերատիվ աշխատանքներ են տարվել էլեկտրոնային լրահոսի ստեղծման ու հրապարակման համար, որոնք ընդգրկում են հոբելյանական միջոցառումների, կարևոր այցերի, գիտական մասի գործունեության և կարևոր նշանակություն ունեցող այլ իրադարձությունների վերաբերյալ քարոզչական, ինֆորմացիոն բնույթի նյութեր պատրաստելն ու շրջանառելը:

Համաձայն 2020-2021 ուստարում մշակված կայքէջի արդիականացման ուղեցույցի՝ տարվել են համապատասխան աշխատանքներ՝ ներառյալ ընդհանուր բովանդակության և կառուցվածքային փոփոխությունները:

Այս ուսումնական տարում շարունակվել են ԱԲՀ պաշտոնական կայքէջում նոր կատեգորիաների, էջերի ստեղծումը: «ՈԱ համակարգ» վերտառությամբ ստեղծվել է որակի ապահովման բաժին, որտեղ ներկայացված են համալսարանում իրականացված ՈԱ ոլորտին առնչվող աշխատանքներ:

Կազմավորված են 5 կատեգորիաներ՝ «Քաղաքականություն», «Պաշտոնի անձնագիր», «Որակի ապահովման գործընթացներ», «Հավատարմագրում», «Ձեռնարկներ և ուղեցույցներ» անվանումներով:

«Որակի ապահովման գործընթացներ» կայքէջի բաժինն իր հերթին բաժանվում է 3 ճյուղերի՝ «Տարեկան հաշվետվություններ», «Ինքնավերլուծություններ», «Հարցումների վերլուծություններ»:

Աշխատանքներ են տարվել ոչ միայն տեքստային բովանդակության, այլ նաև տեսողական /վիզուալ/ դաշտում:

Թարմացվել են «Փաստաթղթեր» բաժնի «Կանոնակարգեր», «Կանոնադրություններ», «Ուղեցույցներ», «Զարգացման ռազմավարական ծրագիր», «Հաշվետվություններ», «Այլ փաստաթղթեր» ենթախմբերը:

Սույն ուսումնական տարվա սեպտեմբերի 1-ից սկսած բազմաթիվ ինֆորմացիոն-տեղեկատվական բնույթի նյութեր են կազմվել և տեղադրվել կայքէջի «Նորություններ և իրադարձություններ», «Հայտարարություններ» բաժիններում:

Ակտիվ է եղել նաև Ավանդական բժշկության համալսարանի ֆեյսբուքյան պաշտոնական էջը: Վիճակագրական տվյալների համաձայն, եթե 2017 թվականին նյութերի հասանելիության ամենաբարձր սանդղակը եղել է 766-ը, ապա վերջին տարիներին, ըստ գրանցված տվյալների, այդ ցուցանիշը անցել է 10,000-ը: Ինչպես ցույց է տալիս վիճակագրությունը՝ ցուցանիշների վրա էապես ազդել են հայերենով և անգլերենով պատրաստված երկու տեսանյութերը:

Աշխատանքներ են տարվում կայքի «Ամբիոններ» ենթաբաժնի համար: Ուսումնասիրվում են ամբիոնների արխիվային տվյալները՝ «Ամբիոնների պատմություն» ենթաբաժնի համար, աշխատանքներ են կատարվել նաև ամբիոնների աշխատակազմի կենսագրական տվյալների հավաքագրման համար:

16. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Հաշվետու ժամանակահատվածում ԱԲՀ Ուսանողական խորհուրդն իրականացրել է բավականաչափ աշխատանք՝ իր կանոնադրության և աշխատանքային պլանի համաձայն: 2021-2022 ուստարվա ընթացքում գումարվել է 8 նիստ, այդ թվում՝ 2 ընդլայնված: Բոլոր նիստերն արձանագրվել են: ՈՒԽ-ի նիստերին մասնակցել են ոչ միայն խորհրդի անդամները, այլև «Ստոմատոլոգիական» և «Բուժական» ֆակուլտետների դեկանը, պրոռեկտորը, Ուսումնական մասի վարիչը, Արտաքին կապերի բաժնի մասնագետը: ՈՒԽ նախագահը մասնակցել է Գիտխորհրդի նիստերին:

ՈՒԽ-ն 2021-2022 ուստարվա ընթացքում ապահովվել է ուսանողությանն անհրաժեշտ տեղեկատվությամբ: Ուսանողներն իրազեկվել են իրենց իրավունքների ու պարտակա-նությունների մասին, ինչպես նաև ծանոթացել ԱԲՀ-ում գործող, նոր մշակված կամ վերանայված այն փաստաթղթերին, որոնք հատկապես վերաբերել են ուսումնական գործ-ընթացի կազմակերպմանը, ուսումնառության արդյունքների գնահատմանը և այլն:

ԱԲՀ-ում գործում են ուսանողների կրթական կարիքները վերհանող մի քանի մեխանիզմներ. անցկացվում են սոցհարցումներ, խորհրդատուների, դեկանի և ուսումնական մասի վարիչի հետ պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ, որի ընթացքում ուսա-նողները հնարավորություն են ունենում բարձրաձայնել իրենց հուզող հարցերը, խնդիրները:

Հաշվետու ուստարում ուսանողները վերհանել են իրենց կրթական կարիքները համա-վարակի ժամանակ չանցկացրած պրակտիկաների, գործնական պարապմունքների, Ավանդական բժշկության ցիկլի դասընթացների՝ Ֆիտոթերապիա, Ասեղ-այրում թերապիա առարկաների ժամաքանակների հետ կապված: Վերհանված խնդիրները գտել են իրենց լուծումը, ուսանողներին տրամադրվել է համապատասխան աջակցություն:

Հաշվետու ուստարում ուսխորհրդի կազմում կատարվել է փոփոխություն՝ ՈՒԽ փոխ-նախագահ Կարվան Համզա Հասսան Հասսանն իր դիմումի համաձայն ինքնակամ դուրս է եկել ՈՒԽ կազմից: Բաց քվեարկության արդյունքում ՈՒԽ փոխնախագահ է ընտրվել Յուվրաժ Սինդ Թակուրը:

ՈՒԽ կազմում ընդգրկված են նախագահը, փոխնախագահը, սպորտային և մշակութային ղեկավարները, քարտուղարը և 4 անդամներ:

ԱԲՀ ղեկավարության կողմից ուսանողներին տրամադրվել են ազատ օրեր՝ ազգային հիմնական տոները (Դիվալի, Նովրուզ, Ռամադան, Հոլի) նշելու կապակցությամբ:

ՈՒԽ-ն մասնակցել է ԱԲՀ 30-ամյակին և 1-ին կուրսեցիների մերձեցմանը նվիրված միջոցառմանը և նրան նախապատրաստվելու աշխատանքներին: Կազմակերպվել են արտալսարանային միջոցառումներ՝ նախապես վերհանելով օտարերկրյա ուսանողների՝ Հայաստանի մշակույթի նկատմամբ ունեցած հետաքրքրությունները: Ուսանողներն այցելել են Էրեբունի թանգարան, Մատենադարան, ցեղասպանության զոհերի հիշատակի օրը Ծիծեռնակաբերդի պուրակում ծաղիկներ են խոնարհել հուշաքարին, մասնակցել գրադարա-նավարուհու կազմակերպած գրքի տոնին նվիրված միջոցառմանը, որտեղ եղել են անակնկալ նվերներ ամենաընթերցասեր ուսանողներին:

Ուսանողները մասնակցել են նաև ուսումնական գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով անցկացված առցանց հարցումներին, շրջանավարտները՝ ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ անցկացված հարցմանը:

Վերանայվել է ՈՒԽ կանոնադրությունը, որը գործում էր 2012թ.-ից: Նախագիծը քննարկվել է Ուսանողական խորհրդում:

Հավելենք, որ ուսանողության հիմնախնդիրներին մեծ ուշադրություն դարձնելը և այդ խնդիրներին լիարժեք լուծում տալը մշտապես եղել է համալսարանի ղեկավարության և ուսանողական խորհրդի անմիջական ուշադրության կենտրոնում:

ՈՒԽ-ն որպես տեղեկատվության տարածման հարթակ օգտագործում է ֆեյսբուք սոցիալական ցանցը:

17. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

3. 2021թ. դեկտեմբերի 8-ին, ՈՒԳԸ-ն, գիտական մասի հսկողությամբ, կազմակերպել է ԱԲՀ-ում կազմակերպված ուսանողական գիտական կոնֆերանսին, ինչպես նաև ՈՒԳԸ անդամները հանդես են եկել տարբեր գիտական զեկույցներով: Միջոցառմանն ակտիվորեն մասնակցել են ԱԲՀ ուսանողները (Զ.Թարիք, Հ.Իսմայիլ, Շ.Շվան, Ռ.Դլշադ, Շ.Ռոյմոն, Լ.Լաուչակ, Ս.Ռաչիլա, Բ.Բաղդասարյան, Մ.Աբդուլա):
4. Ներգրավելով ուսանողներին գիտական աշխատանքներում՝ հիմնվելով նրանց ուսումնառության փորձի վրա, գրանցվել են դրական արդյունքներ, մասնավորապես՝ վերջին ուստարում ուսանողների կողմից հոդվածների տպագրություններ և մասնակցություն միջազգային գիտական կոնֆերանսներին, ընդգրկվածություն համալսարանական գիտահետազոտական խմբերում (Ա.Կամիլ՝ կոնֆերանսի մասնակցություն Բուլղարիայում՝ տպագրությամբ, թեմա՝ «Անոթային վիրաբուժություն», Զ.Ջամալ՝ մասնակցություն կոնֆերանսի Բելառուսում՝ տպագրությամբ, թեմա՝ «Օքսիդատիվ պրոցեսներ/ավանդական բժշկություն/գինեկոլոգիա», Հ.Ղորբանի՝ հոդվածների տպագրություն, թեմա՝ «Օնկոլոգիա», Պ.Անջանկումար՝ մասնակցություն գիտահետազոտական խմբի աշխատանքներին, թեմա՝ «Ռեգեներատիվ բժշկություն /նեյրոգիտություն», Շհեբա Ռոյմոն և Սոջանիա Ռաչիլա - հոդվածի տպագրություն, թեմա՝ կորոնավիրուսային հիվանդություն), ինչպես նաև բարձրացել է ուսանողների ակտիվությունը՝ միջազգային փոխանակային գիտական և ուսումնական ծրագրերի մասնակցելու առումով: Մանրամասն տեղեկատվությունը հասանելի է ԱԲՀ գիտական մասի 2021-2022 հաշվետվությունում:
5. ԱԲՀ ՈՒԳԸ-ն, ինչպես նաև ուսանող-ծրագրավարներն ակտիվ մասնակցություն են ցուցաբերում նաև ԱԲՀ Բաց գիտություն նախագծի շրջանակներում իրականացվող միջոցառումների կազմակերպման և տեղեկատվության վերլուծության գործում: ԱԲՀ գիտական մասի վարիչի ղեկավարմամբ, ՈՒԳԸ և ուսանող-ծրագրավարների ինստիտուտի հիման վրա ձևավորվել է ԱԲՀ «Բաց գիտություն» նախագծի կազմկոմիտե, որը զբաղվում է ծրագրի միջոցառումների կազմակերպմամբ և իրականացմամբ: Կազմկոմիտեի հիմնական անդամներն են՝

6. Լիարժեք տեղեկատվությունը ծրագրի մասին, ինչպես նաև դրա շրջանակներում կազմակերպված բոլոր հանդիպումների ամբողջական տեսաձայնագրությունները հասանելի են ԱԲՀ կայքում և պարբերաբար թարմացվում են:
7. ՈՒԳԸ-ն նաև ԱԲՀ գիտական մասի հետ համատեղ հաջողությամբ ներգրավել է ուսանողներին Հայաստանյան տարբեր կոնֆերանսներին և գիտական միջոցառումներին մասնակցելու, ինչպես նաև տարբեր գիտահետազոտական կենտրոններ այցելություններ կազմակերպելու գործում:
8. Նախապատրաստրվել և սկսվել են ուսանողական գիտական խմբերի ձևավորման աշխատանքները:

18. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

Տնտեսական մասը, համաձայն իր 2021-2022 ուստարվա աշխատանքային պլանի օգտագործել է տնտեսական մասի աշխատակիցների ներուժը՝ ներհամալսարանական տնտեսությունը կազմակերպելիս:

Հստակեցվել են տնտեսական աշխատակազմի գործառույթները, կարևորվել է տնտեսական մասի աշխատողների կողմից իրականացվող աշխատանքների կատարման որակը, դրանց նկատմամբ իրականացվել են պարբերական ստուգումներ, բացահայտվել են թերությունները և միջոցներ ձեռնարկվել դրանց վերացման ուղղությամբ:

- 2021-2022 ուստարվա ուսումնական գործընթացի կազմակերպման համար հատկացված ֆինանսական ռեսուրսներով ձեռք են բերվել՝
  - գրենական պիտույքներ – 465 350 000 դրամ
  - մատյաններ, ուսանողական տոմսեր և գրքույկներ – 418 400 դրամ
  - ստոմատոլոգիական նյութեր - 948 860 դրամ
- Լսարանները և աշխատասենյակները տեխնիկապես հագեցնելու և կահավորելու համար ձեռք է բերվել ՝
  - համակարգիչ - 1 309 500 դրամ /3 հատ/
- Համալսարանի համակարգչային ցանցի սպասարկման համար ծախսվել է 1300900 դրամ:
- Թվային գրադարանի ասոցիացիային անդամագրվելու համար հատկացվել է 70 000 դրամ
- Բուհերի տեղեկատույում տպագրվելու համար ծախսվել է 56 000 դրամ
- Թափուր աշխատատեղերի հայտարարությունների ինտերնետային կայք-էջի համար հատկացվել է 20 000 դրամ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, հաշվետու ժամանակահատվածում համալսարանը, ըստ գործունեության տարբեր ոլորտների, իրականացրել է մի շարք աշխատանքներ, որոնք բխում են շահակիցների կարիքներից, համահունչ են համալսարանի առաքելությանը, միտված են բուհի

ռազմավարական գերակայություններին և ռազմավարական ծրագրի գործողությունների իրականացմանը:

ՀՀ, Ավան, Մ.Բաբաջանյան 38 Հեռ. (+37410) 61-62-90, (+37410) 61-64-70
info@utm.am, www.utm.am
https://www.facebook.com/UniversityofTraditonalMedicine?mibextid=LQQJ4d